Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

531

Շտեղ-ն.

Քրիստոսից կամ

Սեր և ապրելություն

83ս
Շ-72

Տպիսիկ

1877

8315
Ե-72

ՖՐԻԴՈԼԻՆ

ԿԱՄ

ՍԻՐ ԵՒ ԷՏԵԼՈՒԹԻՒՆ

Գրած Բրիտանիայ Շէյդոն

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԻՄ ՍԻՐԵԼԻ ԱԶԳԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Թարգմանութիւն

Տիգրանայ Լեւոնեանցէ

Ցոգուա մեր թշուառ Տաճկաստանից Անդրկովկաս գաղթած արենակից եղբայրների։

2004

ՏՓԽԻՍ

Ի տպարանի Յովհաննէսի Մարտիրոսեանց։

1877

6034

Дозволено цензурою. Тифлисъ, 27 Октября 1877 г.

6473
38

Типографія Мартиросіанца, на Орбеліановской улицѣ № 5

5

ՆՈՒԱՍՏ ՆՈՒԷՐ

ԻՒՐ ԲԱՆԱՄԵՐԱՆԻՑ

ԲԱՐԵԲԱՐԻՆ

Թարգմանեաց

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ

Տաճկաստանից Անդրկովկաս գաղթած հայերի դրությունը յիրաւի շատ ցաւալի է և սրտաշարժ: Այս աչքի առաջ ունենալով, ամէն մի հայ անհատ աշխատում է ձեռքից եկածին չափ օգնել իրա թշուառ ազգակիցներին: Այս էլ իբրև հայ՝ կամեցայ որ և իցէ կերպով օգնել իմ սիրելի եղբայրներին և թարգմանեցի այս գրքուկը յօգուտ նրանց:

Յուսով եմ, որ իմ սիրելի Ազգը ուրախ սրտով կ'ընդունի մատաղահաս թարգմանչիս այս ընչին լուման:

Տ. Ն.

ԴՐԻՊՈԼԻՆ

կամ

ՍԻՐԱԿԱՆ ՍՏԵԼՈՒԹԻՆ

ԳԼՈՒԽ Ա.

Հազակ որսորդներ:

Ֆրիդոլինը մէկ բարի և ազնիւ բնաւորութեան տէր երեխայ էր: Մի անգամ առաւօտը վաղ նա գնաց անտառը փայտ ժողովելու, որ ցուրտ ժամանակ իրանց խրճիթը տաքացնեն:

Անտառում ժողովեց ծառերի չոր ճիւղեր և մի լաւ շալակ կապելով կանուն մարգագետինների միջով տուն դարձաւ և ճանապարհին իրա համար եւլակ էր քաղում: Նա նստեց մի աղբիւրի մօտ, որ փոքր ինչ հանգստանայ և սկսեց սև հացի հետ այն պտուղները ուտել:

Նա տեսաւ այն տեղից մերձակայ բլրի վերայ մի վայրենի այծ իրա ձագի հետ: Փոքր ինչ կանգնելով, նա սկսեց ցած գալ հովիտը: Այծի ձագը թռչկոտելով իրա մօտ լուսեցից դնաց: Աղբիւրից ջուր խմելուց յետ-

տոյ այծը սկսեց կանանչ խոտ արածել, իսկ նրա ձագը իրա մոտ թռչկոտելով խաղում էր։

Ֆրիդոլինը լուռ ու մունջ էր մնացել նստած տեղը, վախենում էր չըլնի թէ կենդանիները փախչեն։ Յանկարծ մի հրացանի ձայն լսուեցաւ, որից դողդողաց երեխան։ Այծը վայր ընկաւ գետնին և մնաց անշարժ, իսկ նրա ձագը դեռ մոր մոտ կանգնած էր։

Մի քանի վայրկենից յետոյ, թփերի միջից դուրս եկաւ հրացանը ձեռքին մի գրիտասարդ, պատռուած շորերով ու խակոյն սպանած այծին հրացանի կոթով այս կողմն այն կողմն շուրջելով՝ ինքն իրան ասաց. «Ահա այս անգամ ձեռքիցս էլ փախչել չը կարողացար։»

Նրան մոտեցաւ նոյնպէս և մի գզգզած շորերով միրուքաւոր մարդ, հրացանը ձեռքին։ Այծի մարմինը ուսի վերայ դցեց և Ֆրիդոլինին տեսնելով՝ սկսեց վազել առանց յետ նայելու։

Ֆրիդոլինը, որի խելքը դեռ գլուխը չէր եկել, այս բոլոր եղելութիւնների վերայ մտածում էր։

—Դրանք աւազակ որսորդներ են, ասաց նա, որ ինձ պէս երեխայից անգամ վախեցան։ Այս րոպէին թփի տակից դուրս եկաւ այծի ձագը, պտտելու իրա մորը։ Ֆրիդոլինը մոտեցաւ նրան և առանց դժուարութեան բռնեց։

Այն միջոցին Ծերունի Մավրիկոս անտառապահը հրացանի ձայնը լսելով, շտապեց գնալ դէպի այն կողմը։ Հեռուից նա տեսաւ չոքած Ֆրիդոլինին, որ ուլին զանազան կերպով ուրախացնում էր։ Ծերունին գիտութեամբ ծառերի յետև թաք կացաւ։

Ֆրիդոլինը ուլին դեռ գուրգուրում էր։

—Ի՞նչպէս գեղեցիկ ու հանգարտ ես դու, ասում էր նա։ Ի՞նչ ուրախութեամբ ես քեզ տուն կը տանէի և լաւ կը նայէի քեզ, բայց չեմ համարձակվում, որովհետև դու անտառապահինն ես։ Միայն մնում է ինձ տանել քեզ նրա մոտ և խնդրել, որ չը թողնի քեզ սպանեն։

Երեխան ուլին ձեռքերի վերայ վերցնելով՝ կամենում էր առնել նրա մոտ. այդ միջոցին Մավրիկոս անտառապահը ծառերի յետևից երևաց։ Ֆրիդոլինը վախենալու վերայ էր, որ անտառապահը քաղաքութեամբ ասաց նրան.

—Մի վախենար, սիրելի՛, ես լսեցի այն, ինչ որ այս խեղճ կենդանուն ասում էիր և գիտեմ որ նրան կամենում էիր ինձ մոտ բերել։ Եթէ կամենում ես, քեզ կ՚ընծայեմ, վեր առ և տար ձեր տուն. դու նրան հեշտութեամբ կարող ես կերակրել ջրախառն կաթով։ Երբ նրա տատմները դուրս կը գան, նա կարող է այնուհետև խոտ ուտել և առանց քո օգնութեան կերակրուիլ։

Ֆրիդոլինը շափազանց ուրախացաւ և շնորհակալութիւն արեց անտառապահին. յետոյ փայտի շալակը մէջքին և ուլը ձեռքին՝ տուն դարձաւ։

—Գնա՛ բարեաւ, բարեկա՛մ, ասաց նրան անտառապահը. միշտ այդպէս ազնիւ կաց և հաւատարիմ, որ բախտաւոր լինիս։

ԳԼՈՒԽ Բ.

Ո ՒԼ։

Ֆրիդոլինը փայտի շալակը տուն բերելով գնաց մօր մօտ իրա ուլին դովելու։ Մայրը նախատեց նրան։

—Ի՞նչպէս համարձակուեցար այդ անել, ասաց նա. ի՞նչու բերիր ուրիշի ուլը անտառից, այդ միւնոյն է թէ գողացար։ Եթէ անտառապահը իմանայ, էլ չի թոյլ տայ, որ անտառ գնաս և մենք ձմեռը առանց փայտի պէտք է մնանք։

—Սիրելի մայր, պատասխանեց Ֆրիդոլինը, դուք առաջ լսեցէք ինձ։

Երեխան պատմեց բոլորը, ինչ որ անտառումը պատահել էր և ինչպէս նրան Մավրիկոսը ընծայել էր ուլը։

—Հա՛, այդ ուրիշ բան է, բայց ի՞նչով պէտք է նրան կերակրես։ Չէ՞ որ քո կերակուրը մի ման կաթն է, սև հացը և գետնախնձորը. մի՞թէ դրանցից քո ուլին էլ փայ պէտք է տաս։

—Ի՞նչու չէ, մայր, ուրախ ուրախ ասաց Ֆրիդոլինը. չէ՞ որ վատ կը լինէր, եթէ թողնէի խեղճ կենդանուն քաղցած մեռնէր։ Չէ՞ որ դու ինքդ շատ անգամ ասում էիր, թէ Աստծուն ոչ մի ողորմութիւն

այնքան սիրելի չէ, որքան այն, որ խեղճը խեղճին օգնում է։ Եթէ դուք թողնէք ինձ, որ պահպանեմ այս ուլին, այս իմ արածը Աստուած կընդունի։

Մայրը ծիծաղեց և չը պատասխանեց նրա խօսքին։

Դրիդոլինը ուլին կերակրում էր, փայ տալով նրան իրա կաթնից. նա մի անկիւնում նրա համար փափուկ մամուխից և տերևներից անկողին շինեց և իրա պարապ ժամանակը նրա հետ էր խաղում։

Մի քանի ժամանակից յետոյ ուլը չափազանց սիրեց իրա փոքրիկ տիրոջը — ճանաչում էր նրա ձայնը, վազում էր նրա առաջ և շուտով սկսեց ամէն տեղ նրա յետևից մանգալ։ Երբ Ֆրիդոլինը անտառում չոր ճիւղեր էր ժողովում, ուլը նրանից մօտիկ մի կանանչ տեղ խոտ էր արածում։ բայց հենց որ Ֆրիդոլինը նստում էր հանգստանալու ծառերի տակ, ուլն էլ իսկոյն նրա ոտների մօտ էր նստում։ Այս գեղեցիկ կենդանին բոլորին զուարճացնում էր և երբ Ֆրիդոլինը դառնում էր անտառից տուն փայտը շալակած և ուլը իրա հետ՝ երեխաները իմիասին ազատակելով վազում էին նրանց յետևից մինչև խրճիթը։

Մի հարուստ գիւղացու որդի եկաւ մի անգամ Ֆրիդոլինի ծնողների մօտ և խնդրեց, որ այն ուլը նրա վերայ վաճառեն, բայց Ֆրիդոլինը պատասխանեց թէ յիսուն դուլդէնով * էլ չի տայ։

—Է՞հ, ասաց մայրը, դու ամէն ժամանակ այդ խելքի՞ չես լինի։

(*) Դուլդէն — 60 կոպ

Բայց հայրը պաշտպանեց որդուն և ասաց, որ այսպիսի սէրը գովելի է և օրինակ բերեց կնոջ, եթէ որ մէկ մարդ առաջարկէր նրան վաճառելու իրա սիրած խնձորի ծառերից մէկը, - անշուշտ չէր համաձայնի:

ԳԼՈՒԽ Գ.

Ֆրիդոլինի ծնողները:

Ֆրիդոլինի ծնողները՝ Նիկողայոսը և Մարգարիտը բնակվում էին Հազելբախ գիւղում: Նրանց խրճիթը ծածկած էր յարդով և մամուռով: Իրանք էլ շատ էին ծերացել: Խրճթի մօտ ունէին մի փոքր այգի: Այս բոլորը նշան էր նրանց աղքատութեանը:

Բայց և այնպէս Նիկողայոսը մի ուրախ մարդ էր: Հարուստ երկրագործները, որոնց մօտ օրով նա բանում էր, նախանձվում էին նրա բնաւորութեան վերայ և միշտ ասում էին.

—Ի՞նչեցն է, որ դու միշտ այդպէս ուրախ ես և բաւական, երբ ցովլի նման աղքատ ես:

—Ի՛մ բարեկամներ, սխալվում էք դուք, պատասխանում էր Նիկողայոսը. ես այնպէս աղքատ չեմ, ինչպէս դուք էք կարծում: Ես այնպիսի հարստութիւն ունիմ ես, որ հարիւր հազար դուլդէնի չեմ տայ — այդ իմ մաքուր խիղճն է: Բացի դրանից, փառք Աստուծոյ, առողջ կեանք եմ անցկացնում և աշխատասէր ձեռքերով կերակրում ինձ և իմ ընտանիքին: Ապա ինչո՞ւ համար տրտմեմ:

Նրա կին Մարգարիտը, բոլորովին ուրիշ բնաւորութեան տէր էր և իրանց աղքատութեան մասին միշտ գանգատվում էր:

Մի անգամ երեկոյեան, երբ նա երգելով իրա մանգաղը սրում էր՝ կինն ասաց. «Ի՞նչ անհոգ մարդ ես, ոչ մի բանի վերայ չես կամենում մտածել:»

—Ես թէ չեմ տեսնում, որ վաղուան համար մանգաղս սրում եմ, պատասխանեց Նիկողայոսը, չէ՞ որ լուսադէմին ես ամբողջ օրը աշխատելու պէտք է գնամ:

—Մենք մի կոպէկ էլ չունինք տանը և ով գիտէ յանկարծ մի դժբախտութիւն պատահեց, այն ժամանակը մենք ի՞նչ պէտք է անենք:

—Է՜հ, սիրելիս, ահագին գումարներ գործ կը դրուէին, եթէ որ ամէն պատահած դժբախտութեան համար փող ժողովելիս լինէինք:

—Կարծեմ քեզ յայտնի է, որ մեր գիւղում տարբերութիւնը սաստկանում է, չէ՞ որ մենք էլ կարող ենք ընկնել:

—Ի՛հարկէ կարող ենք, բայց ի՞նչու մենք առաջուց վախենք. դրանով միայն կը վնասենք մեր առողջութեանը: Մեր վիճակի մէջ աշխատելը և ամէն բանում Աստուծոյ վերայ յուսալը լաւ է:

—Բոլորը մէկ է քեզ համար: Բայց եթէ մենք մեռնենք. ի՞նչ պէտք է թողնենք խեղճ Ֆրիդոլինին:

—Ի՞նչպէս թէ ինչ, ասաց Նիկողայոսը՝ մանգաղը

իրա մոտ քաշելով. մենք նրան մեկ տարակ փողից ա-
ռելի բան ենք թողնում—այդ մեր տուած հաստատ
տուն քրիստոնէական կրթութիւնն է։ Հաւատացած
կաց, որ նա իրա առաքինութիւնը պահպանելով, աղ-
քատ էլ որ լինի, այնու ամենայնիւ ինձ նման ուրախ
կը լինի և բաւական ու ոչ մի ցաւ էլ չի ունենայ։

ԳԼՈՒԽ Գ.

Վիրաւորուած։

Հետզհետէ Նիկողայոսը կարողացաւ համոզել
կնոջը, հետևելու իրա օրինակին։ Նրանք ուրախ էին և
բաւական։ Նրանց երեխան ասուածպաշտութեան մէջ
աճում և զօրանում էր։

Բայց և այնպէս մի սարսափելի անբախտու-
թիւն նրանց խաղաղ կեանքի ձևը փոխեց։ Մի անգամ
Նիկողայոսը մի քանի փայտահատների հետ անտ-
առում ծառ էր կտրում։ Նրանք մի մեծ ծառ կտրե-
ցին, որը լաւ չը կտրուած լինելով՝ Նիկողայոսին
տակովն ընկաւ։ Նա մի քանի վերք ստացաւ, բայց
ամենամեծը՝ աջ թևի վերայ էր։ Ընկերները ազատե-
լով նրան, տարան գիւղը։

Դրիգոլինը և նրա մայրը, փողոցում ժողովը-
դեան աղաղակը լսելով, շատ անհանգիստ եղան. բայց
անկարելի է նկարագրել նրանց զարհուրանքը, երբ
լուսամուտից Նիկողայոսին տեսան շալակած, որ հա-
մարեա թէ մեռած էր։ Նոքուան էլ խրճթիթ դուռ

փողեցին և վերաւորուածի վերայ ընկան. նրանք ի-
բանց արտում աչքերից թափում էին անդադար արտ-
ասուքներ և նրանցով ողողում Նիկողայոսի մարմ-
ինը։

—Ա՛խ յուսահատութիւ, իմ բարեկամներ, ասաց Նի-
կողայոսը. այս դժբախտութիւնը Աստուածանից է ու-
ղարկուած, առանց նրա սուրբ կամքի մարդուս մի
մազն անգամ չի կորչի։

Դրիգոլինը շտապով գնաց գիւղական բժշկի յի-
տևից. նա վազեց և հիւանդին տեսնելով՝ յոյս էր
տալի, որ բժշկել կարելի է։ Այնու ամենայնիւ թևի
վերքը հեռագիտէ վատացաւ, այնպէս որ մի անգամ
բժիշկը վերքը բաց անելիս՝ գլուխը շարժելով ասաց.
«Կարելի է այնպէս պատահի, որ պէտք է թևը կտ-
րել։» Մայրը և որդին շատ վախեցան։ Մարգարիտը
մտքումը դրից անպատճառ գնալ մերձակայ քաղաքը,
լսելով որ այնտեղ գտանվում է մի երևելի վիրա-
բուժ։ Այս բժիշկը պէտք է ասած շատ լաւ վիրա-
բուժ էր, բայց շատ փոքրասէր մարդ։ Նա իմա-
նալով, որ իրան կանչել են մի խեղճ մարդու բժշկու-
թեան համար, 'ի զուր չէր կամենում այնքան հեռու
տեղ գնալ։ Վերջապէս նա խորհուրդ տուեց վերքի
վերայ մի քանի բոյսեր դնելը, հաւատացնելով, որ ան-
շուշտ դրանք կ'օգնեն։ Մարգարիտը ոտներն ընկած
խնդրում էր նրան, որ իրա մարդուն տեսութիւն դայ.
բայց նա ամենևին ականջ չը դրեց։

Յուսահատուած տուն դարձաւ ու իրա հիւանդ մարդուն բժշկի արարմունքը պատմեց։

—Ո՜հ, ես այժմ հասկանում եմ, թէ աղքատ լինելը ինչ վատ բան է, աւելացրեց Մարգարիտը։

—Մի՛ շկըտրիր, իմ Մարգարիտ, ասաց Նիկոդէմոսը. մեր ողորմած Աստծու փեշը բռնիր, որ բժշկների ստեղծողն է և աղքատներին ողորմողը։ Աստուած կուղարկի իմ վերքերիս բժիշկը։ Անհոգ կաց, նա մեր նեղութիւնը գիտէ և չի թողնի մեզ անտէր։

Ֆրիդոլինի սիրտը միշտ կսկծում էր. դեղնել էր նա և ուրախութիւնը, որ միշտ նրա վարդագոյն շրթունքների վերայ փայլում էր՝ թռել էր. նա իրա սիրեկան ուլին էլ չէր մտիկ անում։

Խեղճ երեխան միշտ ծնկների վերայ ընկած՝ Աստծուն աղօթք էր անում։

ԳԼՈՒԽ Ե.

Օգնութիւն։

Մի մղոն հեռու Հաղելլբախ գիւղից, անտառի միւս կողմում կար մի կոմսի ամրոց Ֆինկենշտէյն անունով։ Մի անգամ ճաշից յետոյ ամրոցի իշխանը, որովհետև որսորդութիւն շատ էր սիրում, անտառը որսի գնաց իրա կնոջ սահմանաւոր եղբօր հետ, որը արձակուրդից յետոյ եկել էր այստեղ մնալու։ Կոմսի Ֆրիդրիկոս որդին էլ խնդրեց նրանց հետ գնալ որսի և յանձնած էր Մավրիկոս անտառապահին։

Երանք ծանր քայլերով երկար ժամանակ անտառում մանում էին գալիս։ Մավրիկոսը կամենալով ուրախացնել երիտասարդ կոմին՝ ասաց.

—Տեսնում է՞ք այդ թփերը, դրաղ կը գամ, որ այնտեղ մի քանի նապաստակներ լինեն թաք կացած։ Գնանք, միայն զգուշ կաց, հրացանդ լաւ արձակիր։

Ֆրիդրիկոսին նա մի յարմար տեղ ցոյց տուեց, և սրանից յետոյ հենց որ երկու մեծ որսորդները գնացին, որ թաք կացած հրացանները արձակեն՝ Մավրիկոսը մի շուն հեռը դէպի մարգագետինը գնաց։ Ցանկարծ շունը սկսեց հաչել և Ֆրիդոլինի գեղեցիկ ուլը թփերի տակից դուրս թռաւ, Ֆրիդրիկոսից երեսուն քայլ հեռու։ Ֆրիդրիկոսը նշան դրեց ուլին ու արձակեց հրացանը. վախեցած ուլը դաշտի միջով սկսեց վազել։ Փառք Աստուծոյ, որ կենդանին վիրաւորուած չէր։ Ֆրիդրիկոսը ահ ու դողով հենց նրան էր նայում։ Բայց շատ զարմացաւ, երբ տեսաւ որ ուլը առանց յետ նայելու մնաւ գիւղը։ Իրա բնակարանը նա այն փայտից ճանաչեց, որը ջրաղացի մօտ, աղբիւրի մէջ ցից էր արած և ուղղակի ներս մտաւ այն խրճիթը։

Կոմսը և սահմանաւորը Ֆրիդրիկոսի վերայ ծաղր էին անում, որ նապաստակին ուղիղ չը կարողացաւ խփել. իսկ Մավրիկոսը պատմեց նրան այն ուլի պատմութիւնը, որը նա Ֆրիդոլինին ընծայել էր։ Երիտասարդ կոմը կամեցաւ այս սովորեցրած ուլին տեսնել և խնդրեց գնալ այն խրճիթը։

Երեխան վազեց առաջ։ Ուսուցիչները նրա յետևից գնացին։

Երբ Ֆրիդրիկոսը նեղս մնաց սենեակը, ուր հիւանդ Նիկողայոսը անկողնում պառկած էր՝ տեսաւ նա Ֆրիդոլինին, որը աթոռի վերայ նստել էր և մի կտոր հացից ուլին էլ էր տալիս։

Հենց այս րոպէին ներս մտաւ և կոմը, որը նրա հիւանդութիւնը իմանալով սկսեց հարց ու փորձ անել նրա վիճակի մասին։

Բայց Ֆրիդրիկոսը հօրը յետ կանչեց և խնդրեց գիւղացուն, թէ արդեօք նա չի՞ վաճառի ուլը։

— Իս նրան բայց կը թողնէի մեր որսորդական մեծ անտառի մէջ, ասաց նա և հաւատացնում եմ ձեզ, որ նա ինձ շատ կուրախացնէր։

Ֆրիդոլինը գլխի ընկնելով, թէ թէլը որտեղ է կապում, մօտեցաւ Ֆրիդրիկոսին և ասաց.

— Ա՛պրուստ դրել էի, որ ուլս ամենևին չը վաճառեմ, բայց այժմ կամենում եմ, որովհետև պէտք է քաղաքային բժշկին տուն հրաւիրեմ իմ հիւանդ հօրը բժշկելու, բայց փող չունեմ։

Կոմը երեխայի որդիական սիրուց և Նիկողայոսի անօգնական դրութիւնից գթաշարժուած՝ Ֆրիդոլինին տուեց տասը գուլդէն, որը այդքան գումար տեսած չը լինելու պատճառաւ, իրան հարուստ էր համարում։ Կոմը տեսաւ որ նրա վէրքը վտանգաւոր չէ և կամենում էր դուրս գնալ, բայց իսկոյն ներս մտաւ և ատրճանաւորը։ Սա մի օֆիցէր էր, բայց

այնպէս բարձրահասակ, որ քիչ էր մնացել գլուխը առաստաղին դիպչի։

Հիւանդին տեսնելով, նա սկսեց հարց ու փորձ անել և տեղեկանալ, թէ արդեօք ունի՞ կարողութեան տէր ազգականներ, որ իրան օգնեն։

Նիկողայոսը պատասխանեց, թէ ինքը այստեղացի չէ և թէ չունի ազգականներ։

— Որտեղից էք դուք, հարցրեց ատրճանաւորը։

— Հրունվալ քաղաքից, որ այստեղից երեսուն մղոն հեռու է։

— Հա՛, Հրունվալ քաղաքից, այդ տեղը ինձ լաւ ծանօթ է և ոչ մի ժամանակ լեմ մոռանայ, որովհետև այնտեղ ինձ մի փորձանք պատահեց, որի վերջը վատ կը լինէր, եթէ Նիկողայոս Վերնէր անունով մի մարդ ինձ չազատէր։

— Այդ մարդը հենց ես ինքս եմ, պատասխանեց հիւանդը։

— Ի՞նչպէս, մի՞թէ դուք էլ Հրունվալ քաղաքիցն էք, ասաց ատրճանաւորը։

Նիկողայոսի ձեռքը բռնած՝ երկար ժամանակ մռիկ էր անում նրա երեսին։

— Այո՛, Նիկողայոս Վերնէրը հենց դուք էք, պատասխանեց նա հաստատ մտքով։ Ձեզ իմ ողջ կեանքում մի անգամ եմ տեսել բայց ձեր դէմքի գծագրութիւնը յիշողութիւնիս երբէք չի հեռանում։ Ի՞նչպէս փոխուել էք դուք։

—Կարծեմ դուք ինձ այժմ ճանաչում էք, բայց ես դեռ ձեզ չեմ յիշում:

Այն ժամանակը աստիճանաւորը նրա միտը բերեց, թէ ինչպէս մի քանի տարի սրանից առաջ գիշերը Հրոնվալեան անտառում աւազակները յարձակվել էին նրա վերայ և երիտասարդ զիւղացին մի շալակ փայտ ուսին եկել էր և ազատել նրան:

—Հա՛ եղբայր, աւելացրեց աստիճանաւորը կոմսին դառնալով, այս հիւանդ Նիկողայոսը նոյն իսկ Վերնէրն է, որ ազատեց իմ կեանքը. նա միայն ինձ իրա անունը ասաց և ուղեղ ճանապարհը ցցելով անյայտացաւ:

—Ի հարկէ ես այժմ յիշում եմ, ասաց հիւանդը: Դուք այն ժամանակը կանանչ շորեր ունէիք հագած, որոնց օձիքը կարած էին, նոյնպէս և սպիտակ փետուրով գլխարկ ծածկած. ունէիք և մի ձի, ճակատը նաշխուն: Բայց պարոն, ի՞նչպէս փոխուել էք և դուք:

Աստիճանաւորը հիւանդի ձեռքը բռնելով ասաց.

—Ես ձեր լաւութիւնը ամենևին մոռանալու չեմ և ներողութիւն եմ խնդրում, որ այսքան երկար ժամանակամիջոցում պարաքս չը կատարեցի: Ճիշտ է, ես գրեցի ձեր անունը, բայց այն ժամանակը պատերազմական ծառայութեան մէջ մնայ: Պատերազմը ինձ գցում էր երկրից երկիր և ես մոքումս դրել էի գալ և ձեր իմ վերայ ունեցած պարաքս վճարել: Բայց հաւատացած կացէք, որ միշտ դրա վերայ էի մտածում: Փառք Աստուծոյ, այժմ վերջապէս ձեզ գտայ:

Աստիճանաւորը հիւանդին մէկ մէկ հարց ու փորձ արեց և վերքը տեսնելուն պէս, իմացաւ, որ վտանգաւոր է:

—Այժմ դուք այն դրութեան մէջ էք, որ պէտք է շուտ օգնել ձեզ, ասաց նա. ես շատ ուրախ եմ, որ այժմ ձեզ կարող եմ օգնել:

ԳԼՈՒԽ Զ.

Բարի կալուածատէրեր:

Աստիճանաւորը շտապով կամենում էր գնալ ամրոցը և մարդ ուղարկել քաղաքը լաւ բժիշկին կանչելու. իսկ հիւանդին խնդրեց, որ դեղերի մասին բոլորովին հոգս չը քաշի:

Հենց այս միջոցին Մարգարիտը տուն եկաւ, ձեռքին բռնած մի կողով՝ լիքը զանազան տեսակ խոտերով, որոնք բժշկի խորհրդով էր հաւաքել: Նա շատ տրտում էր և զարմանում էր, տեսնելով իրա մարդու շուրջը այնքան մեծամեծ մարդիկ: Բայց խեղճ կինը, երբ իմացաւ բոլոր պատմութիւնը, շատ ու շատ շնորհակալ եղաւ նրանցից:

Բոլորն էլ շշկլուել էին:

Երբ հիւրերը վեր կացան գնալու, Ֆրիդրիկոսը նեղանում էր, թէ ի՞նչ միջոցով ուզեն մինչև ամրոցը հասցնի. ձեռքերի վերայ վերցնել՝ չէր կարելի, որովհետև բաւականին մեծ էր, իսկ թոկով տանել՝ երիտասարդ կոմսը չէր կամենում:

Վերջապէս վճռեցին, որ Ֆրիդոլինին իրանց հետ տանեն, որովհետև ուլը նրան սովորած լինելով՝ յետևից իրա սովորական կերպով կը գար, և յիրաւի ուլը շան նման նրա յետևից վազում էր:

Այդ իսկ երեկոյեան քաղաքային բժիշկը եկաւ, և գիւղական բժշկից անբաւական մնալով՝ ասաց.

—Լաւ, որ իմ յետևից այսպէս շուտ մարդ ուղարկեցիք, եթէ փոքր ինչ ուշանայի, անպատճառ ձեռքը կտրելու կը դատնար: Ես հիմայ խոստանում եմ, որ անպատճառ վեց շաբաթից յետոյ վէրքը բոլորովին կը լաւանայ:

Սրանից յետոյ բժիշկը կոմսի ձին նստած՝ լուրջանչիւր օր հիւանդին տեսութիւն էր գալիս, իսկ յետոյ շաբաթը երեք անգամ, որովհետև նրանից յետոյ վէրքը այնքան ծանր չէր: Դեռ Նիկողայոսը տանից դուրս չէր գնում և 'ի հարկէ վեց շաբաթից յետոյ Նիկողայոսը, Մարգարիտը և Ֆրիդոլինը կոմսի ամրոցը գնացին շնորհակալութիւն անելու մեծահոգի տասիճանաւորին:

Աստիճանաւորը բժշկից իմանալով, որ Նիկողայոսը չը նայելով նրա կատարեալ առողջանալուն, էլ բանելու չի կարող գնալ՝ փող նշանակեց, որ մինչև 'ի մահ պէտք է ստանար և սրանով ահա նրա ապագան էլ ապահովացրեց:

Որսորդական մեծ անտառը ուլին շատ դուր եկաւ և նա շատ էր ուրախացնում իրա նոր տիրոջը, որին այնպէս սիրել էր ինչպէս և Ֆրիդոլինին: Նա

միայն աղքատներին չէր սիրում, որոնք որսորդական անտառի մօտ՝ խնձորների և տանձերի վերայ նայելով շրջում էին: Ֆրիդոլինին թոյլատրուած էր, որ երբ կամենայ, իրա առաջուայ սիրելուն տեսութիւն կարող է գալ, բայց ամենի երեխան միշտ կիրակի օրերն էր գալիս: Ֆրիդրիկոսը այս դէպքից շահուելով, միշտ նրա հետ խաղում էր և շուտով այնպէս սիրեց Ֆրիդոլինին, որ նրանից չէր կամենում բաժանուել:

Կոմսը և նրա կինը այս տեսնելով, հօր համաձայնութեամբ Ֆրիդոլինին պահեցին իրանց տանը:

ԳԼՈՒԽ Է.

Լեոնի կրթութիւնը:

Ֆինկենշտէյն ամրոցից մի քանի մղոն-հեռու, Վայլդօն անունով մի փոքրիկ քաղաքում, բնակվում էր մի պատուաւոր մարդ Յովհաննէս անունով, որ լաւ որմնադիր (կալատող) էր: Նրա կին Մագթալենան մեծ ազգից էր: Յովհաննէսը լաւ ապրուստի տէր էր նրա տունը հրապարակի-վերայ էր, որն որ հենց իրա ձեռքով էր շինել:

Յովհաննէսի զաւակներից միակը Լեոն անունով, որի մանկութեան արարքներից կարելի էր գուշակել, որ ժամանակին մի խելօք մարդ պէտք է դուրս գայ. բայց ափսոս, որ նրան այնպէս չը մեծացրին, ինչպէս պէտք էր: Հայրը կամենում էր նրան պատուական

ՀԱՅ. ՀԱՆՐԱՊԵՏ ԳՐԱԴԱՐԱՆ
ԽՍՀՄ-ՍՍՀ

մարդ և օգտաւէտ քաղաքացի պատրաստել, իսկ նրա մայրը միայն նրա կոմքն էր կատարում և միւս երեխաներից աւելի լաւ վարվարում: Նա սովորեցնում էր նրան հաստատամիտ լինել: Երբ իրանց տունը հիւրեր կը գան՝ համարձակ նրանց առջև դուրս գալ և սիրով ողջունել, ուշադրութիւն չը դարձնելով երեխայի այն պակասութիւնների վերայ, որոնք հայրը կամենում էր նրանից հեռացնել, բայց և այնպէս հայրը իրա նպատակին հասնել չը կարողացաւ: Մաղթաղենան իրա մարդուն թոյլ չէր տալիս, որ երեխայի հետ խիստ վարուի: Երբ փոքրիկ երեխան իրա ձեռով մի որև իցէ բանի համար սկսում էր լաց լինել, մայրը շտապում էր նրա առաջն առնել, կատարելով նրա ցանկութիւնը և այսպիսով ահա հետզհետէ նրա վարքին վատ ուղղութիւն էր տալիս:

Յովհաննէսը միշտ քաղաքից դուրս էր բանում և մի մի ժամանակ տուն էր գալիս երեկոյեան, և երբեմն մի քանի օր հենց բանելու տեղն էր անցկացնում: Լևոնի կրթութիւնը աւելի մոր վերայ էր մնում, որը սովորեցրել էր երեխային միշտ իրա ուզածի նման շարժուիլ:

—Սիրելի Մաղթաղենայ, միշտ Յովհաննէսը ասում էր նրան, երեխայի վարքը մի՛ փչացնիր. 'ի հարկէ որդուն սիրելը հարկաւոր է, բայց նրան պէտք է սովորեցնել բարի և ազնիւ կերպով և աշխատել—հեռու պահել վատ օրինակից:

Մաղթաղենան յիրաւի յիմար կին չէր, բայց որդու սէրը յաղթում էր նրան:

Երեխան մօրից ահ չունէր, բայց հօր խիստ խօսքերից շատ էր վախենում: Դեռ ևս փոքր ժամանակ նա համարձակվում էր մօր վերայ ձեռք բարձրացնել, իսկ Մաղթաղենան փոխանակ նրան զգուշացնելու՝ այս էր ասում միայն.

—Ա՛յ դու խաբեբայ, միւս անգամ այդպէս չանես, ապա թէ ոչ էլ քեզ չեմ սիրի:

Լևոնը այն ասոյնման վարքով փչացել էր, որ միանգամ երբ հայրը նրա ձեռքից կամենում էր սուր դանակը առնել՝ որ իրան չը վնասի, նա համարձակուեցաւ հօրը խփել:

Յովհաննէսը փայտով մի քանի անգամ նրա ձեռքերին խփեց:

—Մի՞թէ կարելի է երեխային ծեծել, ասաց կինը:

—Մի՞թէ ես ինքս կամենում եմ: Դու ինքդ դատիր, եթէ մի որև իցէ երեխային խօսքը չի ներդործում, այն ժամանակը պէտք է մի կերպով հասկացնել տալ իրա արած գործի վատ հետևանքը:

Ինչպան տարիներ, բայց դեռ Լևոնը չ'ուղղուեց: Մի անգամ հայրը նրա սենեակը մտնելիս, տեսաւ երկու մեծ, բայց դեռ խակ խնձորներ:

—Այս խնձորները քեզ ո՞վ տուեց, հարցրեց հայրը:

—Գեղավաճառի որդին, պատասխանեց նա:

Յովհաննէսը խկոյն գնաց ուղղեցն խմանալու և տեղեկացաւ, որ Լևոնը իրան խաբել է։

Երեխան տեսաւ, որ հայրը իմացաւ իրա գողութիւնը՝ խոստովանուեց որ մերձակայ այգուցն է քաղել այդ խնձորները, մի երկայն փայտի օգնութեամբ։

Մագթաղինան նրա արարմունքի վերայ ծիծաղում էր, բայց հայրը այս բանին ուրիշ աչքով էր նայում։

Ա՝ այս համարում էր գողութիւն և սրա համար իրա որդուն խիստ պատիժ տուեց։

—Զեռ ամաչում, որ երեխային երկու հատ խընձորի համար պատժում ես, բարկութեամբ ասաց Մագթաղինան։

—Բողոքովին ոչ, ես խնձորի համար չեմ պատժում, այլ առաջին նրա սատակութեան համար և երկրորդ նրա գողութեան։

Երեխան էլ չը կարողացաւ իրան զսպել։ Երբ Լևոնը հասակն առաւ, հայրը կամեցաւ սրա առաջն առնել, աչքի առաջ ունենալով, որ համոզմունքով նրան կարող է ներգործել. բայց ոչինչ չ՝օգնեց, ուրովհետև մայրը իրա սիրովը նրան փչացրել էր։

Եւ ահա մի անգամ խեղճ Յովհաննէսը, երբ բանելու էր գնացել՝ սատակիկ մրսեց ու հիւանդացաւ։ Մեռաւ նա՝ օրհնելով իրա կնոջը և որդուն։

ԳԼՈՒԽ Ը.

Անպիտան։

Հոր մահուան համար Լևոնը առաջ շատ էր ցաւում, բայց մի քանի ժամանակից յետոյ սկսեց ուրախանալ, որ ազատուեց հորից և ինքն իրան ինչ կամենայ կանէ. նա մորը այնպէս խաբել էր, որ խեղճ կինը հաւատում էր նրան և նրա ուզածը կատարում էր ամէն ժամանակ։

Հանգուցեալ հայրը նրան ուսումնարան տուեց և նա շատ լաւ էր սովորում իրա ընկերներից։ Խեղճ հայրը որքան կարող էր աշխատում էր, որ որդին լաւ մարդ դառնայ. մինչև անգամ տանը իւրաքանչիւր օր ուսուցչի տուած դասերը սովորեցնում էր նրան. բայց ծուլութիւնը և չարութիւնը կարծես շուտով յաղթեցին նրան և ինչպէս կը տեսնենք վերջը՝ շուտով թողեց ուսումնարանը։

Հոր մահից յետոյ մայրը չը կարողացաւ Լևոնի ուսման վերայ կանոնաւոր հոգ տանել։ Սկզբում Լևոնը լաւ էր պարապում, բայց հոր մահից յետոյ փոքր առ փոքր ծուլացաւ,—յաճախ վաղ դուրս էր գալիս ուսումնարանից և իրա նման ծոյլ երեխաների հետ խաղում։ Երբ պատժում էին նրան, լաց լինելով մոր մօտ էր գնում ու գանգատվում. մի անգամ Մագթաղինան ուսումնարան գնաց և ուսուցչին անպատուեց երեխայի հետ վատ վարուելու համար։

Լևոնը իրան վատ էր պահում մինչև անգամ և եկեղեցու մէջ, և այս բանը քահանան էլ էր տեսել: Մագթաղինային այս էլ դուր չեկաւ և գնաց քահանայի մօտ ու յայտնեց իրա անբաւականութիւնը: Քահանան աշխատում էր հեղութեամբ նրան հասկացնել, որ երեխայի խօսքերին շատ չը լսի, բայց այս բոլորը նրա վերայ ոչ մի ազդեցութիւն չարին:

Լևոնը օրէց օր վարքով փչացաւ. էլ ուսումնարան չէր գնում և ողջ օրը իրա նման անպիտանների հետ խաղում էր և վազվզում, գողանում էր մօրից մանր փողերը և մայրը տան աղախնու վերայ էր կասկած տանում, որի պատճառաւ տանից արձակեց:

Նա շուտով այն գրութեան հասաւ, որ ողջ քաղաքը խօսում էր նրա մասին, իբրև մի վարքով ու բարքով փչացած երեխայի մասին: Երբ նա հասակն առաւ, մայրը կամենում էր նրան մի որևիցէ արհեստի տալ, բայց բոլոր արհեստաւորները, որոնց դիմում էր, նրա որդուն չէին ընդունում:

Այդ ժամանակը Մագթաղինան խմացաւ իրա սխալմունքը և շատ էր ցաւում, որ չը լսեց իրա մարդու խօսքին. բայց բանը բանից անց էր կացել:

Վերջապէս մի փականագործ (սլեսար), որ վաղուց իրա մարդու ծանօթն էր եղած, խեղճ կնոջ դրութեան վերայ ցաւելով, վճռեց Լևոնին իրա մօտ ընդունել աշակերտ: Բարի արհեստաւորը երեխայի վարքը կամենում էր ուղղել և համբերութեամբ ա-

մէն նեղութիւն տանում էր, իրա նպատակին հասնելու համար: Լևոնը, ինչպէս ուսման, նոյնպէս և արհեստի մէջ մեծ յառաջադիմութիւն ցոյց տուեց և յիրաւի իրա արհեստը կարող էր կատարեալ սովորել, եթէ ծուլութիւն չանէր. նա մոռացում էր, թէ ի՞նչու ինքը էլ երեխաների հետ ազատ չը պիտի վազվզի և թէ ի՞նչու իրան համար քաղցրեղէն գնելու փող չը պէտք է ունենայ: Այդ-ից լաւ նա սովորել էր բանալի շինելը, այնպէս որ մի քանի հատ շինել էր ու միշտ իրա մօտ էր պահում:

Մի անգամ, նրա տանուտէրը իրա կնոջ հետ գնաց հարսանիք: Լևոնը մենակ մնալով, տանտիկնոջ պահարանը (շկաֆը) բաց արեց և այնտեղից հանեց տասը ոսկի ու ոսկեայ մի փոքրիկ շղթայ: Միւս օրը, արհեստաւորի կինը տեսաւ, որ կողպէքը կոտրած է և չը գտաւ այնտեղ իրա արկղով փողը ու շղթան: Որովհետև կարծիքը Լևոնի վերայ էր, իսկոյն նրա սենեակը սկսեցին մանդալ և նրա արխալուղի մէջ գտան ոչ թէ միայն տասը ոսկին ու շղթան, այլ և մի ոսկեայ ժամացոյց և մի արծաթեայ զգալ, նոյնպէս և զանազան տեսակ քաղցրեղէններ:

Բարի արհեստաւորը երկիւղից դողում էր: Մի քանի օր սրանից յետոյ, նա Լևոնի հետ գնաց մի հարուստ վաճառականի մօտ բանելու: Սրա տանը, մի կողպած սենեակում այն գողացած ժամացոյցը կախ էր արած: Այս ժամացոյցը նա մի քանի նշաններից

ճանաչեց։ Արծաթեայ գդալը գեղավաճառինն էր, որի մեջ փոքր ինչ առաջ Լևոնին ուղարկել էին հարկաւոր գործի համար. նրա վերայ փորագրած էր միայն գեղավաճառի անուան սկզբնական տառերը։

Երիտասարդը կամեցաւ Լևոնից մի հնարքով դուրս բերել այն գողացած իրեղէնները։ Կեղծաւոր Լևոնը սկսեց սուտ խօսել և զանազան ձևերով նրան և իրա մօրը ցոյց տալ, որ ինքը ճշմարիտ է. աչքերը արտասուքով լեցը նա հաւատացնում էր, որ թշնամիներն են այն գողացած իրեղէնները իրա արկանդի մէջ դրել այն նպատակաւ, որ տանտիրոջ և տանտիկնոջ աչքից գցեն, որոնց նա այդքան մեծ սէր էր ցոյց տուել։ Տանտէրը մնացել էր մոլորած, չը գիտէր թէ ինչ անէր. իսկ տանտիկինը էլ չը համբերելով՝ սկսեց յանդիմանել գողին, մինչև անգամ բերնից մի քանի հայհոյանքներ էլ դուրս թռղեց։ Այս աղաղակի ձայնից ժողովվեցան և հարևանները։ Բայց տանտէրը լռել էր և մտածում, թէ ինչ կերպով կարելի է սրբա տուաջն առնել։ Իրա հանգուցեալ բարեկամի պատուի համար երեխայից գանգատել չէր կամենում, բայց գողութիւնը ծածկելն էլ անխղճութիւն էր համարում։

Իրան սիրա տալով, Լևոնին նա փակեց սենեակում և գնաց ոստիկանական (պօլիցիական) կառավարութեան յայտնելու։

Բայց Լևոնը անկողնու պատուած կտաւի օգնութեամբ լուսամուտից ցածրացաւ և ընկաւ անտառը։

Մաղթաղինան այս բանը իմանալով, սաստիկ յուսահատուեց։ Նրա բոլոր ջանքը, որ գործ էր դնում սրա առաջն առնելու՝ իզուր անցան. թէ և նա իրա նպատակին հասնէր էլ, այնուամենայնիւ նրա անունը միշտ խայտառակուած կը մնար։

Ողջ գիշերը աչքին քուն չէր գալիս։ Դուրսը քամին էր շշնջում, գալիս էր սաստիկ անձրև, բայց խեղճ մայրը հարց ու փորձ էր անում, թէ ուր է իրա որդին, ունի նա արդեօք մի որ և իցէ տեղ և կամ մի կտոր հաց։ Նրա սիրտը մղկտում էր, որ փոքրութիւնից նրա վերայ ամենևին հոգս չը քաշեց։

Մի քանի անգամ նա մարդ ուղարկեց, որ ծածուկ իմանան իրա որդու տեղը. բայց ոչ ոք չը կարողացաւ Լևոնի մասին մի որ և իցէ տեղեկութիւն տալ և խեղճ կինը մտածում էր, որ երեխան անպատճառ յուսահատութիւնից խեղդուել է։ Այս մտածմունքից խեղճ Մաղթաղինան ծանր հիւանդացաւ. բայց երբ առողջացաւ, չէր համարձակվում փողոցումը երևալ, որովհետև ամէն մի պատուաւոր մարդու առաջ ամօթով էր մնում։

ԳԼՈՒԽ Թ.

Աւազակներ։

Լևոնը փականագործի մօտից փախչելով, ինչպէս արդէն ասացինք, մօտիկ անտառում թաք կացաւ։ Պարզ բան է, որ երեխան աշխատում էր, որքան կարելի է

աւելի հեռու և անծանօթ տեղեր մտնի, որ էլ նրան չը կարողանան գտնել. խորը անտառի մէջը մտնելով, նա այնպէս մոլորուեց, որ իրա անցկացած ճանապարհը կորցրեց: Քամին վեր կացաւ, անձրև եկաւ և մեր Լևոնը այնպէս թրջուեց, որ ջուրը վերայից անդադար կաթում էր: Գիշերը վրա հասաւ: Մէկ կողմից քաղցածութիւնն էր տանջում խեղճին, միւս կողմից սաստիկ ցրտից էր դողդողում: Նա վախից սկսեց լաց լինել: Լևոնը ցաւում էր իրա արածի վերայ, միայն երկիւղից և վշտից սոխրուած:

Վերջապէս նա անտառի մէջ, ճանապարհի վերայ մի մարդու պատահեց, որը կեչի ծառի ճիւղերից մի մեծ շալակ կապած՝ տուն էր տանում: Աղուսին կախ էր արել մի մեծ ատաղ, իսկ ձախ ուսին մի տոպրակ: Նա գնում էր մի հատ փայտ ձեռքին: Լևոնը ահ ու դողով նրանից մի կտոր հաց խնդրեց:

—Այդ դու ես, անպիտան, ասաց այն մարդը, ձեռնափայտը թափ տալով նրա վերայ, ա՛յ թէ ձեռքս ընկար, այժմ ես քո պատճառաւ մեծ պարգև կը ստանամ: Դու լաւ ստանութիւն արիր հա, քո մասին ողջ քաղաքը խօսում էր, ուր ես աւելներ էի տարել վաճառելու: Արի, գնանք անպիտան, քեզ ամէն տեղ որոնում են և բանտում արդէն քեզ համար տեղ է պատրաստ:

Ահից Լևոնը նրա ոտներն ընկաւ և ողորմանքով ասաց.

—Ո՛հ, խղճացէք և մի՛ մատնէք ինձ: Ես մեռնում եմ քաղցածութիւնից և այնպէս դադրած եմ, որ ոտներիս վերայ կանգնել հազիւ եմ կարողանում: Ցուէք ինձ մի կտոր հաց և որևիցէ տեղ այս գիշեր անցկացնելու: Քարասիրտ մի՛ լինէք ու լսէք աղաչանքիս:

—Դու բոլորովին մի՛ վախենար, ես հանաք էի անում, քեզ վնասելու միտք չունիմ:

Եւ իսկոյն նա տոպրակից հանեց մի կտոր հաց:

—Կէր, անուշ լինի քեզ, ահա օղի (արաղ) էլ, խմի՛ր

Շարունակեց նա ամանը նրան տալով:

Լևոնը մի քանի անգամ այսպէս խմելուց յետոյ, սկսեց հաց ուտել:

—Այժմ եթէ կամենում ես, արի ինձ հետ և ընթրիք էլ ուտենք, մի մեծ բան չունիմ, խորոված է և մի բաժակ գինի. ընթրիքից յետոյ մեզ նման դու էլ մամուռից և տերևներից շինած փափուկ անկողնի մէջ կը քնես:

Լևոնը չէր կարողանում հասկանալ, թէ այսպիսի հասարակ հագնուած մի մարդ, ի՞նչպէս կարող է իրան խորոված ի և գինու վերայ հրաւիրել, վերջապէս վախենալով ասաց.

—Դուք ո՞վ էք:

—Ես աւելավաճառ Մարտինն եմ, որին բոլորն էլ ճանաչում են, ծառայում եմ մի պարոնի մօտ, որն որ ողջակայ աեղերի բոլոր ստորգութիւնը փողով գնել է: Գնանք, դու էլ մեզ պէտք կը գաս:

Ընտիր Լևոնը հացով և օղիով ուժ ստանալով, իսկոյն անծանոթի յետևից գնաց։

Խիտ անտառի մէջ, նրանց ամէն մեռակ ճանապարհ պատահում էր. ծառերի ճիւղերը միմեանց փաթաթուած լինելով նրանց շարժարում էին։ Վերջապէս այս ամէն նեղութիւնները տանելով, նրանք մտան մի նեղ քարայր (մաղարա), որի ճեղքից Լևոնը տեսաւ մի անտառ, որը կարծես թէ բոցով պատած լինէր։ Թանձր բոցը դուրս էր գալիս ժայռի յետևից, որը ծածկուած էր թփերով։ Այդ տեղ կային նոյնպէս կաղնիներ և թէղոշներ (ծառ), որոնց տերևները բոցի փայլմունքից դեղնել էին։ Ծառերից թափվում էին անձրևի կաթիլներ, որոնցից ամէն մինը կարծես գոհար լինէր։ Այս գեղեցիկ տեսարանը Լևոնին շատ գրաւեց։

—Ահա մենք վերջապէս հասանք, ասաց աւելագործը։

Նրանք գալով ժայռի խորշում, յանկարծ մի մեծ կրակի առջև կանգնեցին։ Ժայռին թինդ տուած, ձեռքերը խաչաձև կուրծքին դրած կանգնել էր մի գեղեցիկ և բարձրահասակ մարդ. նա որսորդական շորեր էր հագել և տեսնելուն պէս կարելի էր հասկանալ, որ սա է աւազակների գլխաւորը։ Նրա կողքին դրած էր մի հրացան, իսկ ոտների մօտ վայր էր ընկած մի սպանած եղջերու։ Նա ուշադրութեամբ նայեց Լևոնին, բայց մի խօսք էլ չասաց։

Կրակի մօտ նստել էր և մի ուրիշ մարդ ու շամփրի վերայ խորովում էր այծի միս։ Այստեղ, խոտի վերայ դրած էր մի մեծ տակառ (բոչկա) և մի բաժակ։

—Մարտին, ասաց խոհարարը, այդ քո մօտի երեխան ի՞նչ երեխայ է։ Գիտես արդեօք նրա լաւ ու վատ լինելը։

—Ինչպէս չէ, պատասխանեց Մարտինը, իրա բեռը մի առանձին տեղ դնելով. նա իրանց քաղաքում պատուաւոր մարդկերանց հետ է նստել վեր կացել, ուրեմն ի՞նչպէս կարող է վատ լինել։

Աւելագործը բաց արեց իրա տոպրակը և այնտեղից սկսեց դուրս տալ զանազան տեսակ բաներ։

—Ահա՛ քեզ հաց, աղ, ծխախոտ, խաղալու թուղթ, բայց ամենահարկաւորը՝ վառօդ և մանր գնդակներ (սեչմայ)։ Ցուսով եմ, որ ինչ ասեմ ձեզ կը լսէք, ասաց խոհարարին։ Յետոյ Լևոնին ասաց, նստե՛նք եղբայր կրակի մօտ և տաքանա՛նք. քեզ մօտ է ահա գինով լիքը տակառը, ընթրիքն էլ շուտով պատրաստ կը լինի։

—Լա՛ւ, ասաց խոհարարը, ես էլ յոյս ունիմ, որ ձեր նոր ընկերը ինձ այս գործում կարող է օգնել։

Լևոնը նրա տեղը նստեց, շամփուրը վեր առաւ և շարունակեց խորովելը, իսկ Մարտինը և խոհարարը սկսեցին ծխել. աւելագործը պատմեց նրան երեխայի պատմութիւնը։

—Հաւատացած կացէք, որ ես այս երեխայի վե-

բայց լաւ կարծիք ունիմ, ասաց Մարտինը. համոզուած եմ, որ նա աւել կապելն էլ շուտով կը սովորի: Փա-կանագործ է նա, սրանով կարող է մեզ մեծ օգուտ տալ, որովհետև կը նորոգի մեր հրացանները, որ ամենաւ հարկաւորն են մեզ և այսպէս ուրիշ շատ գործերում մեզ պէտք կը գայ:

Մարտինը ժայռին թինդ տուած մարդուն նայելով՝ հարցրեց.

—Ստամանն (գլխաւոր), ի՞նչ է ձեր կարծիքը սրա մասին:

Վերջինը ուսերը վեր քաշեց և մի խօսք էլ չը հանեց բերնից:

—Լսիր Լևոն, ասաց աւելագործը, դու այսուհետև մեզ մօտ կը մնաս ու կարող ես լաւ ապրել: Այս պարոնի տխուր կերպարանքից մի՛ վախենար, չը նայելով նա ո՛չ ծիծաղում է և ո՛չ էլ խմում, բայց և այնպէս սիրտը բարի է: Ճշմարիտ, նա լուռ է, միայն խօսելիս լաւ է խօսում: Նրան պարոն Վալլեր են անուանում և ինչպէս երևում է ազգից, շատ ուսման տէր է:

—Ի՞նչ ես գլխիցդ դուրս տալիս, բարձր ձայնով ասաց Վալլերը. ի՞նչու համար նա անունս իմանայ: Այդ գինու զօրութիւնն է, որ խօսեցնում է քեզ:

—Ճշմարիտ է, խմած ժամանակս ես այդ պակասութիւնն ունիմ, պատասխանեց Մարտինը: Ահա Լևոն, մեր միւս ընկերը, որը գինու բաժակը ձեռ-

քին է և չերուխը բերնին՝ անուանվում է պարոն Շլիկ:

—Իսկ դու դատարկախօս, աղաղակեց Վալլերը, մեր ամէն մէկի անունի մասին ի՞նչու ծանօթութիւն չես տալիս... չ՞որ այս երիտասարդը դրանք պէտք է իմանայ:

—Ի՞նչու չէ, իմ անունս Գլուգլու է, որովհետև խմել սիրում եմ:

Այս բոպէին Շլիկը ծխելուց յետոյ մօտեցաւ կրակին տեսնելու, թէ արդեօք խորոված-ը խորովել է թէ ոչ և տեսաւ որ պատրաստ է՝ շամփրի վերայից հանեց, իսկ Մարտինը բաժակը վերցնելով՝ վազեց մերձակայ աղբիւրը և խտակ ջուր լցնելով՝ բերեց ու դրեց իրանց մեծի առաջ: Վալլերը մի պատառ խորոված վերցնելով՝ կանգնած կերաւ և բաժակով ջուրն էլ խմեց: Նրա ընկերները երբ այսպէս ուրախ ճաշում էին, նա գնաց աղբիւրը և ձեռքերը յետևին դրած՝ սկսեց գնալ դալ:

Լևոնի փորը կշտացաւ: Կրակը սկսեց հանգչել. անձրևը դադարեց. ամպերը ցրուեցան և լուսինը բարձր ծառերի միջից սկսեց երևալ:

Վալլերը մօտեցաւ ընկերներին և ասաց.

—Շո՛ւտ կը վերջացնէք ճաշը, արդէն հանգստանալու ժամանակն է: Դու, Շլիկ, այն իմ սպանած եղջերուն ծածկիր ճիւղերով: Վաղը Մարտինը նրան կը տանի այնտեղ, ուր որ ինքը գիտէ, յուսով եմ, որ չի մոռանայ տակառը լցնել գինով:

Այս խօսքերը ասելով, նա վեր առաւ հրացանը ու ծածկուեց ծառերի մէջ։

Շլիկը և Մարտինը շտապով կատարեցին նրա հրամանը և Լևոնի հետ միասին ուղևորուեցան դէպի այն կողմը։ Ճանապարհորդութիւնը բաւականին դժուար էր, որովհետև նրանք ուղիղ ճանապարհով չէին գնում, այլ թանձր անտառի միջով և շատ անգամ բարձրանում էին սարերի վերայ։ Քիչ էր մնացել, որ Լևոնը դադրելուց լաց լինէր։

—Փոքր ինչ սպասիր, դու շուտով կը տեսնես մեր գեղեցիկ ամրոցը, ասում էր նրան Մարտինը։

Վերջապէս լուսնի դուրս գալու ժամանակը, Լևոնը տեսաւ հին ասպետի ամրոցի աւերակների միջից բարձրացող կիսաւերակ բուրգը։

—Ո՛հ, ահա այն առաջուայ սատանաների ամրոցը, սարսափով ասաց Լևոնը, մայրս միշտ պատմում էր նրա մասին։

—Ա՛յ դու յիմար, Մարտինը նրան ասաց, սատանաները միայն քո գլխումն են։

—Ո՛չ մայրս միշտ ասում էր, որ այս ամրոցի շուրջը զարհուրելի դէմքով սատանաներ են թափառում, որոնց բերնից բոց է դուրս գալիս։ Ո՛հ, ես վախենում եմ։

—Քեզ ասում են մի՛ վախենար։ Այն սատանաները, որոնք այս տեղ տեսնուած են—մենք ենք. մենք այս սատանութիւնը պէտք է գործ դնենք, որ ահ ու

դող գցենք այն մարդկերանց սիրտը, որոնք կամենում են այս աւերակներին տէրութիւն դալ։

Շուտով նրանք հասան այն հորին, որով պատած էր ամրոցը և որը այժմ դարձել էր մի ճահիճ, ուր բուսել էին եղէգն և մամուռ։ Աւազակները հորի միջով ծածուկ անցնելու տեղ էին շինել նրա մէջ գցած քարերից։ Ի հարկէ այս քարերի դասաւորութիւնը պէտք է շատ լաւ կերպով լինէր, որ եթէ մի փոքր քարը շարժուէր, կարող էր անցնողը ճահճի մէջ ընկնել։

Հորի և կիսաւերակ պատերի վերայից անցնելով, ընկերները մօտեցան ամուր բրգին։ Շլիկը մի քանի քար գլորեց և իսկոյն նրանց առջև բացուեցաւ մի փոքր անցք, որի մէջ իջնելով, աւազակները նորից այն անցքը փակեցին։

Լևոնին տարան իրանց լայն ստորերկրեայ բնակարանը և երբ այնտեղ ճրագ վառեցին, ելեխան տեսաւ բազմաթիւ ամաններ, կահկարասիք, շորեր և զէնքեր.—ահա այս բոլոր իրեղէնները գետնին մէջեանց վերայ ընկած էին։ Մամուռը և չոր տերևները աւազակների անկողինն էր, որոնք այդ նահապետական ձևով շինած անկողնու վերայ պառկած և վերարկուով ցրտից պաշտպանուած՝ ողջ գիշեր խոբմփալով քնում էին։

Այսպէս ահա Լևոնը աւազակներին էլ ընկեր դարձաւ. բայց այս տեսակ կեանքը չէր հաւանում նա, միայն այս կեանքին էլ սովորեց և այն աստիճան՝ որ

իրա առաջուայ ու հիմիկուայ կեանքի մէջ փոփոխութիւն չէր զգում։ Լեոնը Վալլերից վախենում էր, որովհետև նա միւս ընկերների նման չէր։ Տրտում էր նա միշտ, խօսում էր քիչ, սիրում էր մենակութիւն։ Իրա ընկերների հետ սառերկրեայ բնակարանում չէր քնում, այլ գեղեցիկ կերպով զարդարած մի առանձին սենեակում, ուր կար և այն դուռը, որը բաց էր գլխաւորապէս օտարականների առջև։ Միայն Շլեկը ունէր իրաւունք նրա հետ և մինչև անգամ մի քանի օր մնալ, իսկ միւսները ոչ։

Լեոնը իրա ժամանակի մեծ մասը Մարտինի հետ էր անցկացնում, որին մեծ հաւատարմութիւն էր ցոյց տուել. այս երկու բարեկամները միշտ միմեանց յարգում ու պատվում էին։ Մարտինը նրան ընծայեց մի թեթև հրացան ու սովորեցրեց երեխային նրա գործածութիւնը. Լեոնը մի քանի ժամանակից յետոյ կարողանում էր լաւ հրացան արձակել, այս մեծ ուրախութիւն էր պատճառում նրան։ Հետզհետէ Մարտինը նրան աւազակութիւն էլ սովորեցրեց։ Մի անգամ նա ասաց նրան, որ ինքը՝ էլ չի կամենում աւել վաճառել, այլ լաւ է համարում թափառել անտառում և թռչուններ որսել ու որսած թռչունները տանել տները վաճառելու, որպէս զի այս միջոցով ներսից տան դիրքը կարողանայ իմանալ և այս կերպով ծածուկ իրա օրական ապրուստը ճարի։

— Ես արդէն մի քանի տեղ նայել եմ, ասաց նա, երբ կը մթնի՝ ես, դու և Շլեկը գնանք իմիասին։ Վալ-

լերը չափազանց հպարտ է, այսպիսի դէպքերում նա մեզ չի օգնի։ Բայց նա ձեռքերը խաչած տանը չի նստում։ Երբ Շլեկի հետ նա գնում է զբօսնելու, ինչ ճանապարհորդի էլ պատահում են, առարձանակը նրանց կրծքին մոտեցնելով կամ փող են պահանջում և կամ կեանք։— Դու քեզ համար խելք ունես, ինչպէս կամենում ես այնպէս արա։ Մի՞թէ առաջին անգամն է, որ մենք Շլեկի հետ այդպիսի տեղեր ենք գնում. բայց դու հաստատ խօսք տուր, մեզ հետ գալու միտք ունի՞ս, թէ ոչ։

Լեոնը, որ երեխայութիւնից զողութիւնն իրան սովորականացրել էր, այս առաջարկութիւնն ուրախութեամբ ընդունեց։

Դ հարկէ մի քանի ժամանակից յետոյ մի քանի մոտ և անձրևային գիշեր, Շլեկը, Մարտինը և Լեոնը ընկան մոտիկ գիւղերի և քաղաքների տների վերայ ու նրանց միջև եղած չեղածը հաւաքեցին և փախան անտառը, որտեղ միմեանց մէջ փայ արին։ Լեոնը բաւականին մոտ ստացաւ և նա ուրախանում էր, որ կարողանում է հանգիստ կեանք վարել և առանց չարչարանքի ուրիշի կայքով ապրել։

Սակայն շուտով Լեոնը իրա սկսած գործի պտուղն էլ կերաւ։ Աւազակները իրանց քաջութիւնները միշտ առանց պատժի չեն կարողանում վերջացնել, որովհետև մի անգամ սրանց այդ յանցանքի մէջ բռնեցին. հրացաններ արձակեցին նրանց վերայ. զանգահարութիւնը սկսուեց, որ նշան էր ժողովրդեան հաւա-

քուելուն, և աւազակները իրանց փրկութեան յոյսը միայն փախչելը գտան։ Մի անգամ մի մեծ շուն շղթայից փախչելով, յարձակուեց Լևոնի վերայ, վայր գցեց նրան ու սկսեց կծել և անկասկած կը գզգզէր, եթէ Շլիկը սուրը ձեռքին նրան օգնութիւն չը գար։ Բայց և այնպէս Լևոնը քիչ չը վերաւորուեց, շատ արիւն վազեց նրանից և վէրքը նրան շատ էր նեղացնում, բայց չէր համարձակվում դիմել մի որ և իցէ բժշկի՝ վախենալով չըլնի թէ յայտնուի բանը։

Մի անգամ էլ զինուորները անտառում որոնում էին նրանց. աւազակները չը կարողացան փախչել մինչև իրանց ստորերկրեայ բնակարանը և ստիպուած մի քանի օր թփերի տակ թաք կացան, ուր քաղցածութիւնը մի կողմից էր նրանց նեղացնում և երկիւղը միւս կողմից։

Միշտ գիւղի միջով անցնել նրանք չէին համարձակվում, որովհետև Շլիկին ամէնքը ճանաչում էին. մինչև անգամ աւելաճառն էլ էր կասկածելի դառել, այնպէս որ չէր համարձակվում վաճառանոց գնալ, իրանց հարկաւոր պիտոյքները գնելու։ Շատ անգամ նրանք մի կտոր չոր հաց էլ չէին ունենում։ Երբեմն նրանք մի թռչուն էին սպանում, իսկոյն շամփուրի վերայ խորովում էին, բայց ամբախտաբար այս միջոցին երևում էր զինուորների մի խումբ. աւազակները դեռ մի պատառ բերանները չը դրած՝ շտապում էին փախչել։

Ահա այս ժամանակը միայն Լևոնը զղջաց և ցաւում էր, որ այսպէս չարութեան ճանապարհն ընկաւ։

Քսան անգամ նա կամեցաւ աւազակների ձեռքից փախչել և մտնել ծառայութեան մի որ և իցէ երկրագործի մօտ։ Բայց հենց որ դողացած ապրանքը շատանում էր, նա էլ չէր կարողանում խօսք ասել. ընկերների հետ խմելը և ծխելը նրա բոլոր բարի դիտաւորութիւնները ոչնչացնում էին։

ԳԼՈՒԽ Ժ.

Խորհուրդ։

Մի անգամ երբ աւազակների պաշարը հատել էր, Մարտինը և Լևոնը գնացին մի հիւրանոց, որը շինած էր անտառում մի առանձին տեղ։ Մարտինը բաւական ժամանակ էր, որ այս հիւրանոցի տիրոջ հետ ծանօթացել էր. սա էլ նրանց նման մի աւազակ մարդ էր, ունէր և ուրիշ ընկերներ. պարապում էր թռչուններ վաճառելով, իսկ ընթերցողին ծանօթ աւազակներին պատահած ժամանակ օգնում էր։ Այս անգամ, պաշարը պակասած ժամանակը աւազակները տուին իրանց ծանօթ հիւրանոցի տիրոջը գողացած արծաթէ քթախոտի տուփը (բռնոթամանը) և նա տուեց նրանց հաց և կերակուր։ Երեկոյեան Մարտինը և Լևոնը յետ դարձան իրանց բնակարանը։

Մարտինը գինին, հացը, ծխախոտը, պանիրը և իւղը վեր դնելով, ուրախ ձայնով ասաց. «Եղբայր Շլիկ,

հասել է ուրախութեան ժամը։ Մենք պէտք է նորից խմենք, ծխենք և ուրախանանք։»

Այս միջոցին Վալլերը աւերակների մէջ մտն էր գալիս։ Շլեկը առաջարկեց թէ արդեօք չի՞ կամենայ իրանց հետ ընթրիք անել, բայց նա հրամայեց իրան համար միքիչ ուտելու բան տանեն իրա սենեակը։

Երբ աւազակները ուրախ ճաշ ուտելուց յետոյ առան իրանց չիբուխները և սկսեցին ծխել՝ Շլեկը յանկարծ ասաց.

—Ահա մենք մի ուրախութեան օր էլ տեսանք, բայց ի՞նչ արած, որ այսպիսի օրերը ժամանակաւոր են։ Շուտով կը հատնի մեր պաշարը, այնուհետև ի՞նչ պէտք է անենք։ Սակայն վաճառեցինք այն արծաթէ քթախոտի տուփը, մի՞թէ պէտք է վաճառենք նրա նման և մեր բոլոր ունեցած չունեցածը. ոչ, մի ուրիշ բան պէտք է մտածենք։ Մեզ այստեղ շատ լաւ են ճանաչում, վայ թէ բռնուենք։ Մնում է մեզ, որ մի հարուստ տուն կտրենք ու հեռանանք ուրիշ երկիր, որ մեզ ամենևին չը ճանաչեն։ Ի՞նչ էք կարծում, մեր եղբայրները չեն օգնի մեզ, որ Ֆինկենշտեյն ամրոցը կտրենք։

—Բայց այդ ամրոցը, ասաց Մարտինը, շրջապատած է բարձր պատերով, որոնց վերայով ցածրանալը անկարելի է, իսկ դռները և վանդակները այնպէս պինդ են, որ կարծես բերդ լինի։

—Ես այդ լաւ գիտեմ, բայց ինձ այն էլ է յայտնի,

որ աշխարհիս երեսին չը կայ բերդ, որին անկարելի լինի տիրելը, եթէ միջի մարդիկը օգնեն և ծածուկ ճանապարհ բաց անեն նրանց առջև։ Եւ ահա այսպիսի ժամանակ մեր ընկեր Լևոնը մեծ օգնութիւն կանէ մեզ։ Լսեցէք, ահա իմ նախագիծը (պլանը) և դուք կը տեսնէք, որ նրա կատարելը շատ հեշտ է։ Այժմ եղանակը աշնանային է։ Լաւ օրերին կոմը սովորութիւն ունի իրա ընտանիքով գնալ յանցով թռչուն որսելու։ Ամրոցը յետ դառնալիս՝ Լևոնը ճանապարհի մօտ կը նստի և իրան հիւանդ ցոյց կը տայ։ Սը-բան հեշտ կը հաւատան, որովհետև նա այդ խաբելու ձևերը լաւ է իմանում. բայց որովհետև ամրոցը բոլոր գիւղերից համարեա թէ կէս մղոն հեռու է, կոմը կը խղճայ նրան և կը հրամայի ընդունել իրա ամրոցը։ Գիշերուայ մի ժամանակ, երբ բոլորն էլ խորը քնած կը լինեն, Լևոնը յետևի դարբասները, կամ թէ հենց դռները բաց կանի և մենք առանց դժուարութեան կարող ենք ներս մտնել։

Մարտինը գլուխը կախ արած և մտածմունքի մէջ ընկած լսում էր ընկերոջը։

—Դու լաւ ես մտածել, ասաց Մարտինը, բայց ես զարմանում եմ, թէ դու այդ բանը ինձ ի՞նչպէս պէտք է անել տաս, երբ գիտես որ դժուար կը համաձայնեմ, երբ քեզ լաւ յայտնի է, որ Ֆինկենշտեյն ամրոցի կոմը ինձ շատ բարութիւն է արել։ Բացի դրանից ամրոցի բնակիչները լաւ մարդիկ են, այն-

պէս որ այդպիսի մարդկերանց վնասելը ինձ դժուար է թուում:

—Ո՛չ դրա վերայ մի՛ մտածիր, նրանք Կրասոսի նման հարուստ են, մի քանի հազար գուլդէն աւելի կամ պակաս ձեռաց մխսելը կամ չը մխսելը նրանց համար նշանակութիւն չունի, իսկ մեզ համար մեծ բան է:

—Այդ ճիշտ է, բայց պէտք է այս էլ իմանաս, որ ես կոմսին լաւ եմ ճանաչում, նա մենակ չի, քաջ Մավրիկոսը ամէն կողմից պնդացրած կը լինի ամրոցը, այնպէս որ այս մեր գործը կարող է և շատ վատ վերջ ունենալ:

—Իրա մասին անհոգ կաց. Վալլերը իրա նախագիծը այնպէս է մտածել, որ մեզանից ոչ մէկը իրա գլխի մի մազն էլ չի կորցնի: Դու գիտես, որ նա զգոյշ է և չի սիրում արիւնհեղութիւն: Նա այնպիսի հնարքներ գործ կը դնի, որ ամրոցի բնակիչները այն ժամանակ կիմանան, երբ արդէն բանը բանից անցկացած կը լինի: Մենք միշտ պէտք է զգուշորուած լինենք, որ ամէն ժամանակ կարողանանք մեր անձը պաշտպանել: Բայց այս անգամ պէտք է զգուշանա՞նք թէ ո՛չ ես այդ չը գիտեմ, միայն համոզուած եմ, որ Վալլերը բանը այնպէս կը բերի, որ մենք անվնաս աղատուենք:

—Եթէ այդպէս է, գնանք, մեղքը ձեր շլինքը, թող տեսնենք Վալլերը ի՞նչպէս կաղատի:

Այնուհետև Մարտինը երկար ժամանակ հարց

ու փորձ արեց ու իմացաւ ամրոցի բոլոր ճանապարհները և Լեոնին մանրամասն սովորեցրեց, թէ ամէնից առաջ որ դռներն են հարկաւոր բաց անել:

Լեոնը ուշադրութեամբ այս բոլորը լսեց:

Միւս օրը աւազակները ճանապարհ ընկան և երկար ժամանակից յետոյ մօտեցան Ֆինկէնշտէյն ամրոցին: Վալլերը և Շլիկը սրերով և աորճանակներով էին զինուորուած. Մարտինը գողացած բաների համար տոպրակներ էր վեր առել, իսկ Լեոնը զանազան տեսակ բանալիներ: Երեկոյեան նրանք վեր եկան անտառում, որը ամրոցից մի քանի հարիւր քայլ հեռաւորութիւն ունէր և յարմար ժամանակի էին սպասում:

Աշնանային մի գեղեցիկ երեկոյ, կոմը իրա կնոջ և Ֆրիդրիկոս ու Վարդուհի որդկերանց հետ գնաց զբօսնելու. նրանք վեր առան և թռչուն որսելու ցանցը: Նրանց յետևից գնում էին Մավրիկոսը, հրացանը ուսին և մի ուրիշ որսորդ, որը ցանցն էր տանում: Անտառում մի կանանչ խոտով լիքը ձոր կար, որ համարեա թէ թռչունների բունն էր և միշտ նրանք այնտեղից էին որսում: Որսորդները թոկով կապած ցանցը ծառերի ճիւղերի միջով ցած թողեցին, իսկ թոկի ծայրը տուին Ֆրիդրիկոսի ձեռքը: Կոմը, կոմսուհին և Վարդուհին մօտիկ ծառերի տակ նստած էին: Մավրիկոսը Ֆրիդրիկոսին զգուշացրեց, որ ժամանակին թոկը բաց թողնի: Առ հասարակ այս ձևով թռչուն որսելիս երկար ժամանակ պէտք է

սպասել. հենց որ սկսեց արեգակը մայր մտնել, թրուչունները սկսեցին անց ու դարձ անել այդ տեղով։ Վերջապես նրանցից երկուսը ցանցը չը տեսնելով՝ նրա մէջն ընկան

—Վայ թողէք, աղաղակեց Մավրիկոսը։

Ֆրիդրիկոսը թոկը թողեց և երկու թռչուններն էլ բռնուեցան։ Երեխաները շատ ուրախացան։

Սրանից յետոյ բոլորն էլ յետ դարձան ամրոցը։ Լևոնը վաղուց ճանապարհի մօտ՝ թփերի տակ նստել էր. նա բոբիկ էր և մի ոտին շոր էր փաթաթել, որտեղ թաք էր կացրել իրա բանալիները։ Մութն էր, երբ կոմսի ընտանիքը անցնում էր այս տեղից։ Լևոնին առաջին անգամ Ֆրիդրիկոսը տեսաւ։

—Դու ո՞վ ես, հարցրեց նա.

Լևոնը ձեռքի փայտին դիմհար տալով վեր կացաւ և կաղալով մօտեցաւ նրանց. ոչքան կարելի է նա աշխատում էր, որ իրա սաստիկ հիւանդութիւնը հաստատի։

Կոմը հարցրեց, թէ նա ո՞վ է և այս մութը գիշերը դաշտումը ի՞նչ է անում։ Լևոնը խեղճ խեղճ պատասխանեց.

—Ես մի անբախտ մարդ եմ, չունեմ ոչ ազգական և ոչ բարեկամ ու ստիպուած եմ Աստուծոյ սիրու համար մի կտոր հաց խնդրել անց ու դարձ անողներից։ Ես շատ կը ցանկայի աշխատել, բայց ոտիս ցաւի պատճառով ոչ ոք ինձ աշխատելու չի տանում։ Այսօր Ֆլորամբուրգից եմ գալիս, որը այստեղից երեք

մղոն հեռաւորութիւն ունի և ուր վերքս բժշկին ցոյց տուի և նրա վերայ նա սպեղանի (մհլամ) դրեց և այժմ ինձ սաստիկ նեղացնում է. ցաւից յաղթուած մոլորուել եմ անտառում և ահա կէս օրուանից մինչև հիմայ անհաց, անջուր թափառում եմ։ Ցոյս ունէի գիշերուան մօտիկ Գիրսֆելդ հասնել, բայց այս դրութեան մէջ անպատճառ էլ չեմ կարող ճանապարհորդել և ստիպուած այստեղ պէտք է լուսացնեմ։

Այս սրտաշարժ խօսքերը ասելով, նա հանեց իրա պատռուած թաշկինակը (աղբուխը) և սկսեց աչքերը սրբել։

Կոմուհին և երեխաները անբախտ աղքատին խղճալով, կոմին խնդրեցին, որ թոյլ տայ երեխային բնակուել ամրոցում, մինչև լաւ առողջանալը։ Ինքը կոմն էլ այդ միտքն ունէր, բայց նա ուշադրութեամբ նայում էր նրա վերայ, իմանալու համար ճիշտ է ասում նա, թէ ոչ։

Խորամանկ Լևոնը այս ձևը իմանալով, սկսեց ոտի շորը յետ անել, ցոյց տալու նրան վերքը. բայց նա այս էլ հասկանում էր, որ մինչև այդ տեղը թոյլ չեն տայ։

—Ո՛չ, ո՛չ, պէտք չէ, ասաց կոմուհին, առանց դրան էլ հաւատում ենք։ Արի՛ մեր յետևից։

Լևոնը ուրախանալով, որ իրան այսպէս միամիտ կերպով հաւատացին՝ ձեռնափայտի օգնութեամբ նրանց յետևից գնաց։ Երբ ամրոցը հասան, կոմուհին գանապանին հրամայեց հիւանդին ընթրիք տալ

և ինքը նրա համար գիշերուայ քնելու սենեակ նշանակեց։ Հրամայեց նոյնպէս, որ հենց լուսը բացուի թէ չէ, գնան այն բժշկի յետևից, որն որ Ֆրիդոլինի հօրը բժշկել էր. սրանից յետոյ նա գնաց իրա սենեակը։

Լևոնը լաւ ընթրիք արեց և միշտ վէրքի ցաւից տրտնջում էր ու ոտը բռնում, ցոյց տալու համար որ ճշմարիտ հիւանդ է։ Ընթրիքից յետոյ դռնապանը նրան տարաւ մի ընդարձակ սենեակ, ուր նրա համար պատրաստած էր մի անկողին։

—Ահա այս է քո գիշերուայ քնելու տեղը, ասաց դռնապանը. մամ չէ հարկաւոր քեզ, որովհետև լուսնեակ է։ Ուրեմն բարի գիշեր։

Լևոնը մնաց մենակ։

ԳԼՈՒԽ ԺԱ.

Ստուած լաւ մարդկերանց պահպանում է։

Երբ դռնապանը «բարի գիշեր» ասելով Լևոնի մօտից հեռացաւ, խսկոյն նա ոտի շորը յետ արեց, բանալիները դրեց գրպանը և առանց շորերը հանելու հանգիստ պառկեց անկողնու վերայ, սպասելով որ բոլորն էլ քնեն։ Երբ ողջ ամրոցում լռութիւն էր թագաւորում, զգուշութեամբ նա դուռը բաց արեց և մտաւ մութը նախասենեակը։ Դռնապանը ճրագով Լևոնին գիշերուայ քնելու սենեակը տանելիս, նա

տեսաւ այդու ցանցանման դուռը, որ մի ժանգոտ կողպէքով կողպած էր և որի մասին Մարտինը վաղուց նրան ասել էր։ Լևոնը մի ձեռքին պատրաստ բռնել էր բանալիները, իսկ միւսով աշխատում էր կողպէքը գտնել։

Կամեցած դուռը գտնելով, նա հեշտութեամբ սողնակը տեղից շարժեց և կողպէքը բաց անելով դրան շէմքին մի քանի րոպէ կանգնեց։ Աշնանային կատաղի քամին ծառերի ճիւղերի միջով փչում էր և չոր տերևներին դիպչելով ձայն էր հանում։ Լուսինը ծածկուել էր ամպերով և միայն երբեմն երբեմն աստղերը ամպերի միջից փոքր ինչ լուսաւորում էին մութը։ Լևոնը կամենում էր այստեղ սպասել աւազակներին, բայց ցրտից նրա ոտները այնպէս մրսում էին, որ էլ չը կարողացաւ համբերել։ Դուռը այսպէս կիսաբաց թողնելով գնաց իրա սենեակը, բայց սենեակի դռները չը կողպեց, որ կարողանայ լսել այն բարակ շուռցը, որը աւազակների գալու նշան էր։ Լևոնը անկողինը մտաւ և ձեռքերը գլխի տակ դնելով աշխատում էր չքնել։

Յանկարծ նա մի զարհուրելի ձայն լսեց և դուռը բոլորովին բացուեցաւ։ Նա սկզբում վախեցաւ, բայց յետոյ մտածեց, որ այդ զարհուրելի ձայնը ոչ այլ ինչ է եղել, եթէ ոչ քամին, որ վառարանի մէջ ձայն էր հանում և հենց այս ձայնն է եղել դուռը բաց անողը։ Բայց շուտով նա լսեց նախասենեակում և

ոտնաձայն, որն որ քանի մոտենում, այնքան պարզ էր լսվում:

—Այս մարդու ոտնաձայն չէ, մտածեց Լևոնը:

Յանկարծ նոյն ոտնաձայնը լռուեցաւ և իրա սենեակում ու լուսամուտի մոտ նա տեսաւ եղջերաւոր մի մութը կերպարանք:

Լևոնը սաստիկ վախեցաւ և այս կերպարանքը նրա աչքին այնպէս երևաց, իբր թէ սատանայ է:

Բայց սա նոյն իսկ մեզ ծանօթ ուլն էր: Լևոնին նա շէմքի վերայ նկատելով, քամին հենց որ դուռը բաց արեց՝ ներս մտաւ նախասենեակը և այստեղից հոտոտելով փոքր գողի սենեակը հասաւ:

Լևոնը երկիւղից դողում էր, տեսնելով եղջերաւոր կենդանուն. սառը քրտինքը պատել էր նրա ողջ մարմինը և նա շտապեց փաթաթուիլ վերմակի մէջ: Կարծած սատանան նրա ձակատին մի քանի անգամ խփեց և անկողնու վերայ բարձրանալով՝ սկսեց նրան ոտնակոխ անել: Լևոնը վեր թռաւ անկողնուց և վազեց նախասենեակը, այծն էլ նրա յետևից գնաց. երեխան կամենում էր դուրս գնալ, բայց եղջերաւոր թշնամին սկսեց նրան պոզահարել: Վերջապէս Լևոնը ազատուելով՝ սանդխի վերայ բարձրացաւ, բայց ուլը այստեղ էլ հասաւ և խփելով նոցից վայր գցեց: Վախեցած և վիրաւորուած երեխան սկսեց բարձր ձայնով օգնութիւն կանչել:

Գոռոցն ու աղաղակը զարթեցրին ծառաներին: Առաջին անգամ ճրագը ձեռքին բռնած՝ անտառա-

պահ Մավրիկոսը երևաց սանդխի գլխին: Լևոնը յուսահատուած նրա ոտներն ընկաւ ու ասաց.

—Ո՜հ, օգնեցէ՛ք ինձ, ազատեցէ՛ք փիսին և ես բոլորը կը յայտնեմ ձեզ.

—Ա՜սա, խոստովանուիր, ասաց ծեր որսորդը:

Մինչև որ Լևոնը ուշքի եկաւ, ամրոցի բոլոր ծառայողները վրա հասան և շուտով երևեցաւ կոմը իրա ընտանիքով: Սանդխի վերայի աղաղակը ողջ ամրոցումը տարածուեց:

—Մավրիկոս, այս ի՞նչ աղաղակ է, հարցրեց կոմը և այդ անպիտանը ի՞նչու է մեզ այսպէս անհանգիստ անում:

—Մեր տէր, այս բոլորը հենց իրանից կարող է՛ք իմանալ, ասաց որսորդը.—Ուրեմն ասա՛, անպիտան, ի՞նչ մտքով եկար դու այս ամրոցը: Միայն ճշմարիտն ասա՛, թէ չէ վատ կը լինի:

Այն ժամանակը Լևոնը արտասուելով յայտնեց, որ նրան աւազակ որսորդները խորհուրդ էին տուել աղքատ ձևանալ, որ այս հնարքով կարելի լինէր ամրոցը մտնել և նրանց առաջ բաց անել այդու դուռը:

—Ես համաձայնեցի այս չար խորհրդին, աւելացրեց նա, որովհետև նրանք կամենում էին ինձ ազատել, բայց այն աւազակների փոխանակ երևեցաւ ահա սատանան և վիրաւորեց ինձ եղջերով:

Ֆրիդոլինը ճրագը ձեռքին կոմի մոտ կանգնած՝ ուշադրութեամբ Լևոնի վերայ նայում էր և վերջապէս ասաց.

—Չէ՛, ես քեզ ճանաչում եմ։ Դու էիր, որ մի ժամանակ անտառում վայրենի այծին սպանեցիր, հենց իրա ձագի աչքի առաջ։ Այո՛, նա հենց դու ես։ Ճշմարիտ չէ՞, դու չէիր կարծում, որ ուլը իրա մոր համար մի ժամանակ վրէժխնդիր կը լինի և քեզ կը մատնի արդար դատաստանի ձեռքը։ Տեսնում ես, ինչպէս Աստծու դատաստանը արդար է։

Լևոնը զարմանքով նայում էր Ֆրիդոլինի վերայ, չը հասկանալով նրա միտքը։ Բայց Մավրիկոսը հասկացրեց նրան, թէ ուլը, որի մորը մի ժամանակ նա գողութեամբ սպանել է Հաղելբախեան անտառում՝ ամրոցում մեծացել է և այն իրան վերաբերողը, որին նա սատանայ է համարում՝ նոյն ուլն է։

—Ո՛հ, մի՞թէ ինձանից յիմար մարդ կը լինի աշխարհում, ասաց Լևոնը ճակատին խփելով։ Ես կարծում էի, որ շատերից խորամանկ եմ, բայց բանը այնպէս դուրս եկաւ, որ այծից անգամ խաբուեցայ։ Ո՛հ, ես պատրաստ եմ բոլոր մարդերս մին մին դուրս տալ։

Կոմը խսկոյն հրամայեց այգու դուռը կողպել։ Մավրիկոսը ընդհակառակը խորհուրդ տուեց բաց թողնել այն և բոլոր ծառաներին զինուորուիլ։

—Այս կերպով, ասաց նա, մենք բոլոր աւազակներին կը բռնենք և կազատենք շրջակայ տեղերը, որոնց ահ ու սարսափ են պատճառում։

Կոմուհին այս խորհրդին չը համաձայնեց։

—Ի՞ հարկէ աւազակները առանց զէնքի չեն գայ,

ասաց նա և թաք կենալով՝ մեր մարդկերանցից մէկին կարող են սպանել։

—Ճիշտ է, պատասխանեց կոմը, մենք աւազակներին բռնելու ուրիշ միջոցներ էլ ունենք, առաջին՝ որ նրանց ընկերը մեզ մօտ է, նրանք էլ մեր ձեռքից չեն կարող փախչել և երկրորդ՝ մենք կը սոիպենք նրան աւազականոցը ցոյց տալ։

Այդու դուռը կողպած էր, բայց ծեր Մավրիկոսը հրացանը լցնելով՝ լուսամուտի մօտ նստեց և սպասում էր աւազակներին։ Երկար ժամանակ նա սպասեց, բայց 'ի զուր, աւազակները չերևեցան։ Նշանակեալ ժամին, նրանք եկան և անցան ամրոցի մօտից, բայց Լևոնի ազազակը լսելով, գլխի ընկան, որ նա անպատճառ բռնուել է։ բայց այդ մի քանի լուսամուտներից դեռ լոյս էր երևում և խառնուշփոթ ձայներ լսվում։ Աւազակները շտապեցին անտառը մտնել և սոսափ շտապելուց մինչև անգամ մոռացել էին տոպրակները, որոնք բերել էին գողացած բաները տանելու։

Լուսադէմին, որովհետև կոմը մարդ էր ուղարկել՝ դատաւորը եկաւ իրա գրագրի և երկու ժանդարմի հետ։ Խսկոյն Լևոնին կանչեցին մի առանձին դահլիճ, ուր դատաւորը կամենում էր նրան հարց ու փորձ անել Ֆինկենշտեյնի կոմի ներկայութեամբ։

Լևոնը սկսեց իրա սովորական հնարքները ու ստախօսութիւնները գործ դնել։ Նա ասաց, որ նրան աւազակները խաբեցին և յորդորեցին այս բանը ա-

նելու. որքան կարելի է նա աշխատում էր իրա գլխովը անցկացածը ծածկել, խոստանալով ցոյց տալ աւազականոցը, եթէ Նրան ներեն։

Դատաւորը նրա խօսքին չէր հաւատում, բայց յոյս էր տալիս փոքր ինչ նրա պատիժը թեթեւացնել։

Աղաղակը շուտով ամէն տեղ տարածուեց. շրջակայ տեղերից սկսեցին ժողովվել՝ ժանդարմներ, պահապաններ և զինուորուած բնակիչներ։ Զինուորների մի մեծ խումբ՝ դատաւորի առաջնորդութեամբ ուղևորուեց դէպի այն ամրոցի աւերակները։ Լևոնը պահապանների հետ նստել էր կառքը և ճանապարհն էր ցոյց տալիս. այս ճանապարհների վերայ նշանակած էր շատ զինուորներ։ Ժանդարմներն առանց տրդելքի սողերկրեայ բնակարանը մտան և դուռն այնտեղ երեք աւազակներ, որոնք գիշերուայ ճանապարհորդութիւնից դադրած լինելով՝ քնել էին։ Խսկոյն նրանց կապեցին։ Վալլերը ինքն իրան անձնատուր եղաւ։ Միւս երկուսը փորձեցին պաշտպանուիլ, բայց ի զուր, նրանց էլ կապեցին և Լևոնի հետ դրին կառքի մէջ։

Քաղաքը հասնելուն պէս՝ բոլորին էլ բանտարկեցին և խսկոյն սկսուեց քննութիւնը, որով յայտնուեց նրանց մեղաւոր կամ արդար լինելը։ Գործը բարձր դատաստանին էր յանձնած։

ԳԼՈՒԽ ԺԲ.

Երեք գողերի պատմութիւնը։

Վալլերը լաւ ազգի որդի էր և մարդասպանութեան պատճառով իրա անունը փոխել էր։ Նրա հայրը, որին բոլորն էլ պատվում էին՝ հասարակ գործի տէր չէր։ Վալլերը հենց մանկութեան ժամանակ բաւական ընդունակ երեխայ էր։ Ծնողները նրա կրթութեան համար ոչինչ չէին խնայում և տասնութ տարեկան հասակում Նրան համալսարան ուղարկեցին։ Նա շատ լաւ էր սովորում, բայց չափազանց բարկացող էր։ Մի անգամ, երբ նա զբօսնում էր իրա ընկերների հետ, ընկերներից մէկը, ճաշ ուտելուց յետոյ Նրան մի անպատիւ խօսք ասաց։ Այն ժամանակ երիտասարդները սովորութիւն ունէին իրանց հետ զէնք մանածել և երբ միասին գնացին անտառը, Վալլերը բարկացած ընկերին սպանեց։

Արիւնաշաղաղ սուրը ձեռքին՝ Վալլերը երկիւղով և դոյնը թռած իրա սպանած ընկերի մօտ կանգնել էր։ Բոլոր ընկերները խորհուրդ տուին փախչել շուտով, նա էլ լսեց Նրանց խորհրդին։ Մի քանի օր շարունակ անտառում թափառում էր, քաղցածութիւնը Նրան շատ էր նեղացնում և վերջապէս ճարը կտրուած նա մի արհեստաւորի որդու հետ ընկերացաւ։ Այս երիտասարդը Նրան պատմեց, որ սկզբում զինուորական ծառայութեան մէջ էր և թէ զօրաց

գնդին պատկանած մի նշանաւոր գումար խաղալիս տանուլ է տուել։ Պատժից ազատ մնալու համար՝ Վալենտինը փախաւ զօրախմբից և ընկերացաւ աւազակների հետ ու իրա անունը փոխեց Շլեկ։

Երկար ժամանակ նրանք անտառումէին բնակվում. նրանց կերակուրը միայն որսի միսն էր, բայց որովհետև այս իրանց չէր բաւականանում՝ նրանք սկսեցին ճանապարհորդներին կողոպտել (թալանել) և հենց սրանք էին, որ Ֆինկենշտէյնի կոմսուհու եղբօր վերայ յարձակուել էին և որին Ֆրիդոլինի հայրը ազատել էր։

Մի քանի ժամանակից յետոյ Շլեկը Մարտինի հետ էլ ծանօթացաւ և այսպիսով եղան երեք շատ սիրով ընկերներ։ Մարտինի պարտականութիւնն էր որս վաճառելը, որի միջոցն էր բնակիչների տների դռները իմանալը. բայց դրան իրա արբեցողութեան և կոպտութեան պատճառով միւս ընկերները ատում էին։ Վալտերը մի րոպէ էլ նրա հետ չէր նստում վեր կենում։

Մարտինը, որ երբեմն Գիրսֆելեան նահանգի հարուստ կալուածատէրերից մինն էր, ամուսնացած էր մի գեղեցիկ և բարի կնոջ հետ և ունէր զաւակներ։ Հպարտութիւնը, ծուլութիւնը, սէր դէպի զուարճութիւնները և ատելութիւն դէպի անտեսութիւնը՝ ահա՛ սրանք եղան նրա թշուառութեան գլխաւոր պատճառը։ Իրա բոլոր ունեցած չունեցածը արբեցողութեամբ ոչնչացրեց. նա աղքատացաւ, սկսեց գո-

ղութիւն անել և այս բանի մէջ բռնուելով՝ փախաւ անտառը։ Այսպիսի մարդու համար աւազակութիւնը դժուար չէ։ Շլեկի հետ նա հարուստ կալուածատէրերին և անզէնք ճանապարհորդներին կողոպտում էր։ Վալտերը նրանց ամէն տեղ ուղարկում էր, բայց ինքը շատ քիչ տեղ էր գնում։

Այն օրը, երբ պէտք է նրանց վճիռը կարդային, դատարանի դահլիճը լիքն էր հասարակութեան բազմութեամբ։ Ժանդարմները առաջին անգամ Վալտերին դատաստանի կանչեցին։ Խորը լռութիւն էր թագաւորում։ Զը նայելով նա շատ տարիներ աւազակութիւն արեց և երկար ժամանակ նստեց բանտում, այնուամենայնիւ առաջուայ բարութիւններից դեռ նրա մէջ երևում էին։ Նա դէպ 'ի մահ էր դատապարտուած։ Անբախտը ուշադրութեամբ վճռին ականջ էր դնում։

—Պարո՛ն նախագահ, ասաց նա, ես սպասում էի այս վճռին։ Ես չը կատարեցի Աստուածային և մարդկային պարտականութիւնները և արժանի էլ չեմ խղճալու...

Շլեկը և Մարտինը նոյն վիճակին արժանացան։

ԳԼՈՒԽ ԺԳ.

Լևոնի զղջալը։

Դեռ զողերը չէին խմացել իրանց պատիժը, որ Լևոնը սաստիկ հիւանդացաւ։ Բանտի բժիշկը հրա-

մայեց նրան կապանքից ազատեն և տանեն մի առանձին սենեակ, որ կարողանայ նրան առողջացնել։ Ամեն ժամանակ բժիշկը, նրա օգնականը, քահանան և բանտապետը տեսութիւն էին անում Լևոնին. նա նրանց հետ խօսելով մխիթարվում էր, բայց մենակ մնալով՝ կրկին տրտմութեան մէջ էր ընկնում։ Բանտի լուսամուտը մի պատի դէմուդէմն էր շինած, այնպէս որ հիւանդը բացի պատից՝ ոչինչ չէր կարողանում տեսնել։

Այն օրը, երբ նրանց վճիռը պէտք է յայտնէին՝ Լևոնը բանտի շուրջը լսեց մարդկերանց ձայներ, շատ եկող գնացողների ոտների թրփթրփոցներ, շղթաների և զէնքերի շրխկշրխկոցներ։ Երբ Ռոբերտոս ծառան Լևոնին կերակուր բերեց, նա հարցրեց այս շարժմունքի պատճառը։

—Պամենում ես իմանալ սրա պատճառը, ասաց տրտում ծառան. այսօր քո երեք ընկերների պատժի վճիռն են յայտնում, որ եկող ուրբաթ նրանց գլուխը կտրեն։ Ափսոս, որ յանկարծ հիւանդացար, թէ չէ քո սատանութիւնները նորից կը բանացնէիր։

Այս ասելով՝ Ռոբերտոսը դուրս գնաց և դուռը յետ արեց։

Լևոնը այնպէս վախեցաւ, որ ողջ մարմինը դող ընկաւ։ Իւրաքանչիւր ձայն նրան անհանգիստ էր անում, դրան իւրաքանչիւր բաց ու խուփ անելը նրա սիրտը ահ էր գցում և կարծում էր, թէ գալիս են նրան յայտնելու մահուան վճիռը։ Ընկերների պատ-

ժի օրը, լսելով երկար ու տխուր զանգի ձայն՝ Լևոնը սաստիկ շփոթուեց։ Վեր թռաւ տեղից, իսկոյն հագնուեց և դրանը մոտեցաւ ու ականջ էր դնում—ոտների թրփթրփոցներ, շղթաների զնգզնգոցներ և զէնքերի շրխկշրխկոցներ, ահա այս ձայները նրան աւելի էին մոտենում։

Այս ձայները նրան սաստիկ վախեցրին. նա սոսկալուած էր տեղից վեր կենալ ու նստել անկողնի վերայ։ Յանկարծ նրա սենեակի դուռը աղաղակով բացուեց և ներս մտաւ Ռոբերտոսը մի ուրիշ բանդապետի հետ։ Լևոնին այնպէս թուաց՝ թէ նոյն րոպէին իրան կախաղան են տանում։ Նա չէր իմանում, որ դատաստանի վճռով իրա ընկերների պատժին ինքն էլ պէտք է ներկայ լինէր...

Այսօրուանից սկսած, Լևոնը համարեա թէ մեռած էր։ Նրա հիւանդութիւնը աւելի ևս սաստկացաւ։ Պատժի սարսափելի պատկերը միշտ երևում էր նրա աչքի առաջ... Նա իրա վիճակից վախենում էր, բայց բանդապետը, որի պարտականութիւնն էր գնալ գալ Լևոնի մոտ նրա հիւանդութեան ժամանակ՝ ասաց, որ նա դատապարտուած է մի քանի տարի շարունակ առանձնացած սենեակում մեղքը ողջալ։

Եւ Լևոնի սիրտը միանգամայն հանգստացաւ. նա այնուհետև սկսեց այստեղից փախչելու միջոց գտնել։

Դեռ քանի որ քնոտութիւնը շարունակվում էր,

Ֆինկենշտեյն ամրոցի կոմը Ֆրիդոլինին տուեց Գիրա-Ֆելդ քաղաքի անտառապետի մօտ ծառայելու, որ երիտասարդը անտառային կառավարութեան մէջ վարժուի։ Այս անտառապետի կինը չափազանց մարդասէր կին էր և իմանալով Լեոնի հիւանդութիւնը՝ երբեմն երբեմն ուղարկում էր նրա համար լաւ լաւ կերակուրներ։ Մի անգամ Ֆրիդոլինը նրա հրամանով մի խորոված վառեկ տարաւ բանտը։ Բարի երիտասարդը ցաւում էր Լեոնի վիճակի վերայ, բայց նրան այնպէս թուաց, թէ իրա վերայ ծաղր է անում և այս պատճառաւ Ֆրիդոլինի գեղեցիկ և կանանչ շորերին նա նախանձուեց։

—Ես անբախտ եմ, իսկ դու ինձ վերայ ծաղր ես անում, ասաց նա բարկութեամբ։ Դու կարօտացար ամրոցը մտնել քո անիծուած ուլի շնորհքովը, որն որ եղաւ թշուառութեանս իսկական պատճառը։ Այս գարշելի կենդանին ինձ այս օրը գցեց. մինչև այսօր ամէն բան ինձ յաջողել է։ Բայց ես յոյս ունեմ աւելի բախտաւոր լինել. մայրս փողով ինձ յետ կը գնի և նրա մօտ դեռ բաւական փող կը մնայ, որով կարող ենք երջանիկ ապրել։ Ես քեզ նման սափրուած չեմ լինի ծառայել մէկի մօտ իբրև սպասաւոր։

Այնուամենայնիւ Լեոնը վառեկը լաւ ախորժակով կերաւ և շնորհակալութիւն անգամ չարեց Ֆրիդոլինին և նա էլ ախուր սրտով հեռացաւ նրա մօտից։

Քանի գնում էր, Լեոնի հիւանդութիւնը սաստկանում էր։ Քահանան միշտ տեսութեան էր գնում

նրան, բայց նրա աշխատանքը 'ի զուր անցկացան, որովհետև նա չը կարողացաւ յետ դարձնել նրան վատ սովորութիւնից։ Մի անգամ նա բանտից դուրս գալիս՝ նախասենեակում պատահեց Ռոբերտոսին։ Վերջինը սկսեց Լեոնի մասին նրան հարց ու փորձ անել և Լեոնը որ հենց բնութիւնից հետաքրքիր էր՝ մոտեցաւ դրանը, որ լսի թէ ինչ են խօսում։

—Ի՞նչ էք կարծում այս բռնուածի հիւանդութեան մասին, հարցրեց Ռոբերտոսը։ Նա չի՛ գնայ էն աշխարհը. հաւատացէ՛ք այնպէս զզուել եմ գնալով գալով, որ հոգիս դուրս է եկել։

—Ընդունթ մի՛ լինէք, իմ բարեկամ։ Երեխային միայն մի քանի օր է մնացել ապրելու, նրա հիւանդութիւնը շատ վտանգաւոր է։ Մի փոքր էլ համբերէք։

—Չէ՞ որ բոլորն էլ ձեր համբերութիւնը չունեն։ Դուք արդէն չափազանց բարի էք, չը նայելով ես լաւ հասկանում եմ, որ ձեր բոլոր աշխատանքը 'ի զուր կանցնեն. անպիտանը ոտից մինչև գլուխ փչացած է։

—Ո՞հ, այդ անբախտը ինձ շատ անհանգիստ է անում, ես վախենում եմ, որ նա չդիմանայ։

—Եթէ այդպէս է, ուրեմն ի՞նչու էք 'ի զուր տեղը հոգս քաշում։

—Այդ մի՛ ասէք, իմ բարեկամ, խօսքը կտրեց քահանան. ինչպէս որ էլ նա փչացած լինի, քրիստոնէական հաւատը շատ թանդ է, նա այդ թոյլ չէ

տալիս. մեր պարտքն է բոլոր միջոցները գործ դնել նրան ուղղելու համար։

Լևոնը այս խոստովանությունը բոլորը լսեց և նրա սիրտը անսովոր կերպով խփում էր։ Ռոբերտոսի խիստ խոսքերը նրա վերայ աւելի ներգործություն ունեցան, քան թէ բարի քահանայի կարճառօտ ճառը։

—Ուրեմն էլ չպէտք է առողջանամ, մտածեց նա, ուրեմն մեռնելուցս յետոյ դժոխքում պէտք է չարչարուիմ։ Ո՛չ, այս քահանան շատ բարի է, նա իմ լաւն է կամենում... Այժմ ես տեսնում եմ, որ մեղաւոր եմ նրա հետ վատ վարուելուս համար։

Եւ դառն արտասուքները առուի պէս թափում էին Լևոնի աչքերից...

ԳԼՈՒԽ ԺԴ.

Լևոնը և նրա մայրը։

Լևոնի փախչելու օրից, Մագթաղլենան մի րոպէ հանգստություն չունէր. բայց երբ իմացաւ, որ իրա որդին երեք աւազակների հետ Գիրաֆելդ քաղաքում բռնուած է կկծից քիչ էր մնացել սիրտը պատռի։ Առանց ուշանալու նա ճանապարհ ընկաւ դէպի Գիրաֆելդ. երբ քաղաք հասաւ, գնաց դատաստանի նախագահի մօտ և նրա ոտներն ընկնելով՝ աղաչում էր, որ ներեն որդուն։ Բայց նախագահը պատասխանեց, որ դատաւորները պարտաւոր են օրէնքին

համաձայն դատաստան կարել։ Նրան մինչև անգամ իրաւունք չը տուին տեսնել Լևոնին, մինչև գործի վերջանալը և խեղճ կինը պէտք է տուն գնար և սպասէր մինչև որոշեալ ժամանակը։

Լևոնը շատ էր ցանկանում տեսնել մօրը, գործի վերջանալուց առաջ։ Նա իմացաւ, որ նա եկել է Գիրաֆելդ և չեն թողնում իրան տեսություն դալու։ Այն ժամանակ նա բարի քահանայի օգնությանը դիմեց։

—Սիրելի Լևոն, ասաց քահանան, քո մայրը առաջուայ պէս քեզ սիրում է, բայց նա սաստիկ հիւանդ է այժմ և արդէն մի քանի ամիս է տեղ ու բարձից չի վերկացել։

Անցաւ մի քանի օր և յանկարծ մի առաւօտ Լևոնի բանտի դուռը բացուեց և մօտեցաւ նրան մի դեղնած և լղար կին։ Լևոնը դժուարությամբ նրան ճանաչեց—այնպէս նա փոխուել էր...

Սիրելի ընթերցող, գրիչս չի զօրում նկարագրել այս մի քանի սրտաշարժ և արտասուալի րոպէն, թէ ինչպէս մայր ու որդի միմեանց հետ տեսնուեցան...

Կէս ժամից յետոյ, փոքր ինչ հանգստանալով, Մագթաղլենան Լևոնի անկողնի վերայ նստեց և բռնեց նրա ձեռքը։

—Մայրիկ, ասաց որդին սրտակտուր ձայնով, ներում էք արդեօք ինձ։

—Ի՛մ սիրելի որդի, պատասխանեց մայրը տրտմությամբ նայելով Լևոնի վերայ. ես քեզանից մեղաւոր

եմ։ Իմ սաստիկ սերը եղաւ քո թշուառութեան պատճառը։

—Ո՛չ, ո՛չ միայն ես եմ մեղաւոր, ասաց Լեոնը. դուք չէք իմանում իմ արած բոլոր սատանութիւնները։ Հաւատացէք, որ այժմ իմ առաջուայ վարքը ատում եմ և գիշեր ու ցերեկ Աստծուն աղօթք եմ անում, որ ինձ ների։

Նա ընկաւ բարձի վերայ։ Խորը ախ քաշեց ու կողպեց աչքերը։

Այս միջոցին ներս մտաւ բժիշկը։ Նա բռնեց Հիւանդի բլակը, ուսերը վեր քաշեց և դեղ գրելով նրա համար՝ հեռացաւ։ Մագթաղենան նրա յետևից գնաց մինչև նախասենեակը և ահ ու դողով հարցրեց հիւանդի դրութեան մասին։ Բժիշկը խորհուրդ տուեց նրան աղօթք անել Աստծուն։

Միւնոյն օրը Մագթաղենան դատաւորներից թոյլատրութիւն խնդրեց Լեոնին մի ուրիշ յարմարաւոր սենեակ տանելու, ուր նա իրա որդու վերայ կարող էր նայել. քահանան ամէն օր հիւանդին տեսութիւն էր գալիս։

Հիւանդը մեռաւ շուտով, բայց մեռաւ ինչպէս պէտք էր ճշմարիտ քրիստոնեային—իրա բոլոր մեղքերը դղջալով։

Մայրը սրանից յետոյ երկար չապրեց և որովհետև ուրիշ որդի էլ չունէր, իրա բոլոր հարստութիւնը իրանց քաղաքի որբերին կտակեց։

ԳԼՈՒԽ ԺԵ.

Ֆրիդոլինի բախտաւորութիւնը։

Շուտով Ֆրիդոլինը, ինչպէս անտառաբուծութեան (անտառ շատացնել), նոյնպէս և գիւղատնտեսութեան մէջ յառաջադէմ եղաւ. սովորում էր մաթեմատիկայ, աշխարհագրայ, երկրաչափութիւն և նկարչութիւն։ Կոմը սիրով տալիս էր նրան իրա հարուստ գրադարանից գրքեր և երիտասարդը աշխատում էր հետզհետէ իրան ընթերցանութեան մէջ կատարելագործել։ Շուտով անտառապետը նրան այն աստիճան սիրեց, որ ամենահարկաւոր գործերը նրան էր յանձնում։

Գինկենշտէյն ամրոցի կոմը իրա որդուն համալսարան ուղարկելով՝ առաջարկեց և Ֆրիդոլինին նրա հետ գնալու, բայց որովհետև սա չափազանց երախտագէտ էր՝ կատարեալ կրթութիւն ստանալով, սովորեց սրա հետ և անկարանութիւն, որին նա շատ ընդունակ էր։

Համալսարանական ուսումն աւարտելուց յետոյ՝ երիտասարդ Ֆրիդրիկոսը հօրից թոյլատրութիւն ստացաւ գնալ ուրիշ երկիր ու իրա հետ տալու հրաւիրեց և Ֆրիդոլինին, որն որ 'ի հարկէ չը մերժեց նրա խնդիրը, որովհետև այս յարմար ժամանակ էր երկիրներ տեսնելու համար, բայց աւելի այն պատճառ-

ռաւ, որ Ֆրիդրիկոսն ու Ֆրիդոլինը միմեանց հետ շատ սիրով էին և մի խօսքի տէր։

Մեծ մայրաքաղաքներից մէկում, ուր մեր ճանապարհորդները մի քանի ժամանակ մնացին՝ Ֆրիդրիկոսը մի անգամ երիտասարդներից բաղկացած մի ժողովում, բարոն Բէնդէրի հետ վիճեց։ Վիճելու նիւթը թեթև էր, և Ֆրիդրիկոսը իրա խօսքին հաստատ էր մնացել, բայց բարոն Բէնդէրը նրան ասաց մի քանի անվայել խօսքեր, որոնք կոմսին դուր չեկան։ Շատ երիտասարդներ կարծում էին, որ Ֆրիդրիկոսը իրա անպատուութեան վրէժը մահով կը հանի Բէնդէրից, բայց ընդհակառակը Ֆրիդրիկոսը քաղաքրութեամբ կամենում էր մի քանի հարց տայ, բայց նրա յետևին կանգնած Ֆրիդոլինը չէր կամենում, որ Ֆրիդրիկոսը Բէնդէրի հետ դուրս գնի ու խօսի՝ ասաց բարձր ձայնով.

—Կոմս, յիշում է՞ք Վալերի դատաստանը։

Ֆրիդրիկոսը նոյն րոպէին միտը բերեց։

—Ճշմարիտ, ասաց նա, մենք գնանք տուն և այնտեղ լաւ մտածենք ու դատենք, թէ ի՞նչ պէսք է անենք։ Ասած է որ «Առաւօտուայ շառը իրիկուայ խերից լաւ է»։ Ես չէի մտաբերում Վալերի դատաստանը։

—Այդ ի՞նչ Վալեր է, հարցրին երիտասարդները և նրա դատաստանը ի՞նչ բան է։

—Ֆրիդոլին, պատմի՛ր այս պարոններին, ասաց Ֆրիդրիկոսը, իմ ուշքը դլխա չէ, որովհետև շատ շփոթուած եմ։

Ֆրիդոլինը իրա բարեկամի խնդիրը կատարեց և պատմեց նրանց ընթերցողին յայտնի անցքը, այնպէս գեղեցիկ և ճարտար, որ բոլոր երիտասարդների սիրտը մղկտաց ու բոլորի աչքերը թաց եղան արտասուքով։

Բարոն Բէնդէրը խոստովանուելով, որ առանց պատճառի նեղացրել է երիտասարդ Ֆրիդրիկոսին՝ խոկոյն վազեց նրա մօտ և ներողութիւն խնդրեց ու բոլոր ներկայ եղողները շատ սիրեցին Ֆրիդրիկոսին, որ նրան ներեց։ Տուն դառնալով, Ֆրիդրիկոսը փաթաթուեց Ֆրիդոլինի ճտովը ու ասաց.

—Շնորհակալ եմ քեզանից, իմ բարեկամ, քո բարութեան համար. առանց քեզ ես կամ երկրի երեսին չէի ապրիլ և կամ մի մեծ ամբաստութեան մէջ կ'ընկնէի։ Դու ես ինձ այս բոլոր ցաւերից ազատողը և ես երբէք չեմ մոռանայ։

Երբ երիտասարդ ճանապարհորդները հայրենիք եկան, շատ ուրախացրին իրանց ծնողներին։ Սկզբումը Ֆրիդոլինը ծեր կոմսի մօտ տանու ատենադպիր դարձաւ. իսկ մի տարուց յետոյ, երբ անտառապետը մեռաւ, Ֆրինկենշտէյնի կոմսի խօսքով, նրան տուին այն պաշտօնը։

Ֆրիդոլինը շուտով իրա ծնողներին իրա մօտ բերեց։

Մի քանի ժամանակից յետոյ, նա մի սիրուն աղջկայ հետ պսակուեց։ Կոմսը Ֆրիդոլինին շատ էր սիրում, այնպէս որ Ֆրիդրիկոսին ու նրան իրարից

4084

չէր ջոկում։ Կոմսը նրան մի որսի դանակ ընծայեց, կոթը արծաթ։ Դանակի գեղեցիկ կոթի վերայ նկարած էր՝ թէ ինչպէս Ֆրիդոլինը երեխայ ժամանակ կաղնի ծառի տակ ուլի հետ խաղում էր և այս՝ միջոցին հեռուից ինչպէս Մավրիկոս անառաւապահը նայում էր նրանց։

ՑԱՆԿ

		Երես.
1.	Մի քանի խօսք	Ա
2.	Աւազակ որսորդներ	1
3.	Ուլ	4
4.	Ֆրիդոլինի ծնողները	6
5.	Վիրաւորուած	8
6.	Օգնութիւն	10
7.	Բարի կալուածատէրեր	15
8.	Լէոնի կրթութիւնը	17
9.	Անպիտան	21
10.	Աւազակներ	25
11.	Խորհուրդ	37
12.	Ասաուած լաւ մարդկերանց պահպանում է	44
13.	Երեք գողերի պատմութիւնը	51
14.	Լէոնի զղջալը	53
15.	Լէոնը և նրա մայրը	58
16.	Ֆրիդոլինի բախտաւորութիւնը	61

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ

531

0004679

2013

ՀՀ Ազգային գրադարան
NL0004679